


Ltin  
✓ 92.4

1999 1

«Արքայի բարձրագույն մասնակիութեա -  
Տեսակ Յանձնութեան Հայոց Հայոց Հայոց  
ՅՈՎԿԱՆՆԵՍ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.

Ապրիլ 5




## Շ Ի Ր Ա Կ Ի

2019 | **ԼԵԳԵՆԴԱՆԵՐԻՑ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
Կ Ե Ա Ն Ք Ի Ց**



Ա. Ա. ՔԱՅԱՆԴՐԱՊՈՅ  
ՏՊԱՐՈՒ Ա. Մ. ՄԱԼԽԱԾՅԱՆՑԻ  
Տիպ. Ա. Մալխանցա, Ալեքսանդր, ալ. ճ. № 48.  
1896

Дозволено Цензурою. Тифлисъ, 13-го Сентября 1895 г.



ՃԻՐԱԿԻ ԼԵԳԵՆԴԱՆԵՐԻՑ

4924-60

28. 9. 95

ՆՈՒԽՐՈՒՄ ԵՄ

ՀՕՐԱ ՏԵՐ-ՅՈՎԱՆԵՓԻ

ԿԵՆԳԵՆԻ ՅԵԶԵՏԸԿԻՆ

ՆՈՒԽՐՈՒՄ ԵՄ

Մեծին ու պատեկին,

Զահէլ-ջուլֆատին,

Դարվագ-դուրսկաթին.

Հայրենիքիս

Սարին, ձորին,

Քարին, հողին,

Ջրին, բոյսին,

Շիրակի

Աշխատաւոր գիւղականին.

## ՀԱՍՏՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԲԸ ԵՎ ԱՃՈՒՂԸ.

Հով արէ՛ք, սարե՛ց ջան, հով արէ՛ք,  
Իմ՝ դարձիս գարման արէ՛ք,  
Հով արէ՛ք, սարե՛ց ջան, հով արէ՛ք,  
Դուշմանիս խապար տարէ՛ք. . .

Ժաղալը.

## ՀԱՍՏՐԱԿԱՑ ԽՈՒՄԲԲԸ (աշուղին):

Ո՛ռ չունգուրդ, զարկ թելերին, պար ածէ,  
Մենք ձեռներս բռնած ուրախ խաղ կ'անենք,  
Յաւն ու վիշտը թող հեռանան,—մեզ պէտք չէ,  
Դեռ շատ բաներ կատարելու պէտք ունենք:

Ա՛ռ, այ աղբէր, ժողովրդի բան ածէ,  
Նորա երգը, նորա խաղը սիրում ենք,  
Փո չունգուրդ մեր սրտերը կըվառէ,  
Մենք ձեռքերս բռնած անհոգ խաղ կ'անենք:

Մարդու սիրտը անուշ ձայներ է սիրում,  
Մարդու սիրտը ժողովրդի խօսք կուզէ,  
Մեր սրտերում, աղբէր, չկալ խնդութիւն,  
Ուրախ երգեր որ չենք լսել՝ վաղնաց է:

Ա՛ռ չունգուրդ, զարկ թելերին, պար ածէ,  
Թո՛ղ սրտերս մի քիչ խնդայ՝ օր տեսնենք,  
Հասարակի լաւ գործերից դու երգէ,  
Որ սրտերս կրակ լցուի—ուժ առնենք:

Աշուշը (Երգում է).

Բարձր ձիւնոտ սար կալ դաշտում,  
Դաշտի վերայ—սիրուն աղջիկ.  
Երբ լուսնեակը ծագաւ սարում,  
Քաջը հեծաւ ձին գեղեցիկ.  
Ափսնս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսնս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Քշեց, եկաւ, դաշտին հասաւ,  
Հայ աղջրկան թամքին առաւ,  
Աստղոտ գիշեր՝ ինչպէս աչեր—  
Շրշում է հով կուսի մազեր.  
Ափսնս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսնս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Բարձր ձիւնոտ սար կալ դաշտում,  
Դաշտի վերայ—սիրուն աղջիկ,  
Առաւօտեան մալրն է զարթնում—  
Զկայ իրան սիրուն Աստղիկ...  
Ափսնս աչեր՝ ինչպէս երկինք,  
Ափսնս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Փախցրեց քաջը—քուրդը լեռնական,  
Տարաւ իր գիրկը հայոց աղջրկան.

Երգիչը այսպէս հնչեց չունգուրով—  
Տխոնը, վշտալի՛, հին գեղգեղներով:

Հասարակական իրահետ (աշուշին).

Մենք նոր երգ կուզենք ուրախ ձայներով,  
Հին շատ ենք լսել,—տխոնը է, լացնվ.  
Ա՛յ աղբէր, նորից մեզ մի բան երգէ,  
Չունգուրիդ լարը նո՞ր բանի լարէ.  
Հին շատ ենք լսել—տխոնը է, լացնվ,  
Նոր երգէ շուտով:

Աշուշը (Երգում է).

Երկու եղբայր կային գիւղում,  
Զերթ տատրակներ սիրով էին,  
Եղբօր արե, եղբօր արիւն,  
Սուրբ էր ինչպէս ուխտատեղին.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ,  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք:

Նորանցից մէկն անցաւ սարից,  
Քուրդը թրով կարմիր ներկեց.—  
Զիմացաւ որ միւսը վշտից՝  
Վառոդի պէս շուտ բռնկեց.  
Կարմիր արիւն—կարմիր ծաղիկ,  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ:

Կրակ կտրաւ, քամի դարձաւ,  
Զիուն թռաւ, ելաւ եկաւ,

Եղբօր տեղակ չորսին զարկեց,  
Քաջքի նման սարսափ քցեց.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ,  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք:  
  
Ոյն օրուանից էլ սիրտ չարաւ՝  
Իսլամ մօտ գայ «Հայքիստոնին»,  
Եղբօր սէրը սուրբ խունկ դարձաւ,  
Սնուշ հոտով ելաւ երկինք.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ,  
Կարմիր արիւն—կարմիր ծաղիկ:  
  
Դէհ, աղբէրներ, ձեռք բռնեցէք,  
Ոտք վերցուցէք, պար խաղացէք,  
Թո՛ղ տիրութիւնն անցնի ձեզնից—  
Աղբէրն ընկաւ—պարզեց երկինք.  
Կարմիր արիւն—կարմիր ծաղիկ.  
Արիւն թափաւ—բուսաւ ծաղիկ:  
  
Հասարակայ խուճը. (աշուղին).  
  
Լաւ է երգդ, բայց գու էլ նորը երգէ,  
Լաւ է խաղդ, աղբէր, օրուայ բան երգէ:  
  
Աշուղ (երգում է).  
  
Կալի միջում կայ կաթնատուն,  
Կաթնատնում զով է, արձակ,  
Խնոցու մէջ հարում է «Հում»,  
Աղջիկ—թագուն նստած սեան տակ:  
  
Նա նստել է բարձր թմբին  
Ու ձեռքերով ամուր բռնել,

Մէջքն էլ տուած փայտէ սիւնին—  
Խնոցու վրայ երկու ոտքեր:

Նա շարժում է՝ օրօր բերում,  
Իր ոտքերով խնոցու «Հում»,  
Հետն էլ երգ է ասում կամաց—  
Այդ երգ թագունն ինքն է հիւսած:

### ԹԱԳՈՒՆԻ ԵՐԳԸ

«Բարձր սարին հաւք չի հասնում,  
Միայն անուշ հովք է փչում,  
Իսկ այն բարձրում՝ աստղերու հետ,  
Լուսաւորչայ վառ է կանթեղ<sup>1)</sup>.  
Մատաղ հոգուդ—սրտոտ աղբէր,  
Այն կանթեղը քեզ թուր ու թև:

«Սարի կրծքում լիքն են ակներ,  
Այդ ակները—աղբիւրներն են,  
Ակն ու աղբիւր, իմ քաղցը աղբէր,  
Փափագ սրտիս շողն ու ցողն են.  
Երնէկ, աղբէր, քեզ սիրողին,  
Երբ կըհասնիս քո մուրազին:

«Հարաւ կողմից ամպ է գալիս,  
Ամպ է գալիս,—տերե դողում,  
Խփուելով է զանգակ-ծաղիկ,  
Աքաղաղն էլ շատ է կանչում<sup>2)</sup>.

1) Աւանդութիւն կայ, որ Ս. Լուսաւորչայ կանթեղը Արագածի վերաց կախուած՝ միշտ վառ է:

2) Այս հշոնները ժողովրդի կարծեքով միշտ գուշակում են անձըւ:

Անձրեւ կուգալ—ոսկի կուգալ,  
Իմ աղբէրը ուր է, չկայ...

«Լուսոյ աստղը հենց դուրս եկաւ,  
Սրտոտ տղան ալ ձին հեծաւ,  
Զարկեց, քաշեց,—փախաւ տաք ձին,  
Կռուի գնաց կէս գիշերին.  
Երնէկ, աղբէր, քեզ սիրողին,  
Երբ կըհասնիս քո մուրագին:

«Խապար չկայ հեռու տեղից,  
Քաջի սրտում դադար չկայ,  
Վաղուց է որ կտրալ քնից,  
Մեր թշնամուց հանգիստ չկամ.  
Վաղուց է որ կտրալ քնից,  
Խապար չկայ հեռու տեղից...»

Թագունն այս էր երգում կամաց,  
Երգն էր քաջի համար հիւսած.  
Օգնութեան էր գնացել նա՝  
Սրտոտ տղան—քաջը անահ.  
Այսպէս երգեց եղբօր համար,  
Որ գնացել էր կռուի համար. . .

Հասարակաց խո-ճըւ (աշուղին).

Մէկ էլ երգէ, երգէչ եղբայր,  
Քո ասածդ սիրեցինք,  
Նուտով կ'անցնի նեղութեան դար,—  
Բացուելու է պարզ երկինք.

Մէկ էլ երգէ, երգէչ եղբայր,  
Քո ասածդ սիրեցինք:

Աշու-ճը (երգում է).

Դուրսը քամին լացով, ճիշով,  
Գիշերուալ մէջ ձայն է հանում,  
Խըճիթի մէջ, օրօցքի քով,  
Մայրը որդուն երգ է ասում...

Բոլորն այնտեղ քուն են մտել,  
Դեռ ճրագը փալլիվալլում է,  
Իսկ ծղրիթը երգը կցել—  
Մեծ կատուն էլ մոմուում է...

«Քնիր, որդիս, անոնշ որդիս,  
Մայրը որդուն երգ է ասում,  
Ես գագրել եմ օրուալ դործից—  
Շատ բան ունիմ առաւօտուն...

«Անուշ, ոսկէ երազները,  
Քեզ համար միշտ չեն լինելու,  
Հըշտակների սուրբ երգերը՝  
Միայն հիմալ ես լսելու..»

«Որդուս համար օրօր ասեմ—  
Քունը իջնի պարզ աշերուն,  
Հըշտակների դասն հրեղէն  
Գան պահպանեն մատաղ հոգուն...

«Արձակ դաշտում ոռնում է գալ,  
Անօթիք է, ինչ է ուզում.  
Գամ, դու կորիր, որդուս չեմ տալ,  
Լաց չի լինիլ, կըմտնի քուն:

«Քնիր, որդիս, անուշ որդիս,  
Աստղեր վաղուց դուրս են եկել,  
Քամին լոեց ազատ երգից,  
Ազատ երգը քաջն է կցել...

«Ուրտեղ էիր, այ քաջ տղայ,  
Երկինք, երկիր մայիլ են քեզ.  
Էրնէկ մօրդ, սրտուտ տղայ,  
Ինչու չլինէր որդիս էլ մեծ...

«Մօր սիրտն ինչպէս խորունկ ծով է,—  
Մարդարիտ կալ—անխախտ հաւատ.  
Քաջի դէմքը արեով է  
Ոտքի կ'ելնես կեանքում ազատ...

«Քնիր, որդիս, անուշ որդիս.  
Մայրը որդուն երգ է ասում,  
Քամին լոեց քաջի ձայնից.—  
Յաղթող քաջը տուն է դառնում....»

Հաստրակաց իռանձը (աշուղին).

Սյունետե շուտ շուտ երգէ,  
Մեզ ինդացուց քո երգը,  
Նոր եղածից, լաւից երգէ,  
Որ փարատուի մեր վէրքը:

Անուշ ձայնը մարդու հոգին վառում է,  
Երբ այդ ձայնը ուրախ բանից ասում է.  
Մենք տիսուր երգ շատ ենք լսել մեր կեանքում,  
Տիրութիւնն էլ սահման ունի տշխարհում:

Զարկ չունգուրին, երգիչ եղբայր,  
Թող մոռանանք ցաւ ու կիրք,  
Շուտով կ'անցնի նեղութեան դար,  
Բացուելու է պարզ երկինք.  
Մէկ էլ երգէ, երգիչ եղբայր,  
Քո ասածդ սիրեցինք...

1890 թ.

### ԸՐՓԵՉԱՅԻ ԱԼԻՔՆԵՐԻ

#### I

Էլ, հալալ է... Արփաչայի ջուրը զարկում է ափին,  
Ափին զարկում, երգ է ասում... զարժեցնում է իմ հոգին,  
Անուշ է, ջան, հին երգերը լեռների մէջ պահպանուած,  
Արփաչայը ժողովում է, տարածում է ձայնով ցած...

«Կըծքիս վերայ, պարզ ջրիս մէջ անմեղ աղջիկ եմ տանում,  
Հողեղէն չէ, հրեշտակ է նա, մեծ աշխարհն է վկայում,  
Վարսերն ինչպէս ամպը-փրփուր,-դէմքն արշալոյս լուսածին,  
Իսկ շրթունքը՝ ծովի մարջան,-մարգարիտներ կան միջին...»

«Նա չի լողում, զուտաճանում, ամուր փակել է աշեր,  
Թողիս, մետաքսէ թարթիչներին և աստղերն են զարմացել,

Մատաղ կրծքին գոհար-ակ կալ,-վէրքն է թարմ ու արիւնոտ,  
Դեռ հոսում է վառ արիւնը նորա կրծքից կրակոտ...»

«Հարսնացնւս է... իմ սիրելիս... առաւօտները շատ վաղ,  
Միշտ գալիս էր, լուանում էր իր երեսը լուսաշաղ,  
Երեկոյեան ջուր էր տանում միշտ հրապուրիչ երգերով,  
Ապշում էին սար ու ձորեր նորա երգից անվրդով...»

Է՞լ, հալալ է... Արփաչալի ջուրը զարկում է ափին,  
Ափին զարկում, երգ է ասում... զարթեցնում է իմ հոգին,  
Կրծքի վրայ, պարզ ջրի մէջ անմեղ աղջկկ է տանում,  
Հողեղէն չէ, հրեշտակ է նա— մեծ աշխարհն է վկալում:  
Նա չի լողում, զուարձանում, ամուր փակել է աչեր...  
Անուշ քունդ այդ լաւիտեան... անուշ, աղջիկ անձնուէր...

## II

«Երբ անօրէն թուրքը մտաւ հայ աղջկայ հօր տունը,  
Չինայեց նա ոչոքի—թրի անցուց ողջ տունը,  
Քեզ ձեռք չեմ տալ, տռփասէրը ասաց մաքուր աղջրկան,  
Հնազանդ եղիք հրամաններիս... կըլինիս իմ սիրական»...

«Ատելութեան կրակ ընկաւ հայ աղջկայ սրտի մէջ,  
—Քրիստոնեալ եմ.. անարդ լուծդ, թուրք, տանելը մահէ մեծ-  
Զկամեցաւ հնազանդուել թուրքի կրքին ու կամքին,  
Հօրսուն առաւկութեցզարկուեցընկաւ խոր վէրքը կրծքին...»

«Ես չթողի լեռների մէջ, բերի հարսիս, սիրելուս,  
Վերջին անգամ ես հրապուրուիմ նրա չքնաղ աչերուց,  
Ես չթողի, ջրիս միջով բերի՝ աշխարհը տեսնի,—  
Նրա կրծքի կարմիր արիւնն՝ արար-աշխարհ տարածուի...»

Պետն երգում է ու հսում է բլրապատ ափերով,  
Հազար ականջ այդ լսում է ու լցում է զայրոլթով.—  
Քրիստոնեալի տունն էր քանդուել, ընտանիքներ գլխատուել,  
Հրեշտականման աղջիկները Փրկչի խաչին զոհ եղել...

Է՞լ, հալալ է... Արփաչալի ջուրը զարկում է ափին,  
Ափին զարկում, երգ է ասում,—զարթեցնում է իմ հոգին,  
Կրծքի վերայ, պարզ ջրի մէջ անմեղ աղջկիկ է տանում,  
Հողեղէն չէ, հրեշտակ է նա, մեծ աշխարհն է վկայում...

Նա չի լողում, զուարձանում, ամուր փակել է աչեր,  
Անուշ քունդ այդ լաւիտեան... անուշ... անուշ... անձնուէր...

1894 թ.

## ԿՈՅՐ ԱՇՈՒՂԾ

## I

Ո'տք, շնուչ չկայ դղեակի մէջ,-շուրջը քամին է փչում,  
Եւ հինաւուրց ուռիները մեղմ ու խաղաղ օրօրուում,  
Ճանապարհին, արձակ դաշտում մէն-միայնակ է կանգնած,  
Եւ լալիս է, ու պատմում է նա տիրագին այս արկած...—

Մի ժամանակ, շատ տարիներ—շէն էր դղեակն և ուրախ,  
Ամուսիններն գգւում էին միակ դստրիկը չքնաղ,  
Եւ այդ դռան շէմքը երբէք փակ չէր մնում օտարին,  
Ուրախութիւն, խնդում ու երգ հնչում էին ականջին...

Հիմայ լուռ է հին դղեակը, չի ցանկանում փեսացու,  
Խնամախօսն էլ չի դալիս—և ոչ ջահէլներ հուժկու,

Ամայացել է դղեակը,—ամուսիններն գժբախտ  
Դստեր համար լաց լինելով՝ իջան սև հող անյապաղ...—

## II.

Դեղեցկուհին վառուած սրտով սիրել էր մի պատանու,  
Սէրը նոցա կապելու էր և այդ օրը չէր հեռու,  
Բայց չար բախտը ծնողներին երկնի պատիժ էր գրել,—  
Քաջ պատանին անյայտացաւ... Զկար նորա ստուերն էլ:

Ու տանջւում էր խեղճ աղջիկը, գիշերները չէր քնում,  
Խսկ ցերեկուալ լոյս արևով—երազների մէջ ընկնում,  
Ույդ սիրավառ սէրն էր այդպէս բորբոքուել էր նորա մէջ.  
«Ծնող, ընկեր, հնար ունիք, սփոփեցէք ցաւը մեծ..»

Չէ, չի գրաւում գեղեցկուհուն հրապոյրները կենսական,  
Ոչ հօրն ու մօր սփոփանքը, ոչ ձայները խնդութեան.  
Նա միայնակ միշտ նստում է լուսամուտի տակ անխօս,  
Եւ ծառերի խշխոցից՝ նա թախծում է անորոշ...

## III.

«Հանգստացիր ուռենու տակ, ո՛, կոյր աշուղ զգայուն,  
Ու սազդ առ, ու երգ ասա, մի երգ տխուր, ոլորուն,—  
Չքնաղ կոյս կայ դղեակի մէջ, շուրջը քամին է փչում,  
Եւ հինաւուրց ուռիները գլուխը-կոր խըշըշում...»

Նստաւ տղան ընկերի հետ, սրբեց դէմքից քրտինքը,  
Ու երբ մի քիչ հանգստացաւ, վերցուց սազը նա ինքը,  
Մի սրտառուչ արկած պատմեց՝ նա զրկուել էր սիրելուց,  
Ոյն օրից երբ կոհւ գնաց՝ թօթափելու թուրքի լուծ...

Բայց անողորմ թշնամիներն նորան գերի բռնեցին—  
Նատ աւելի չարչարանքով՝ երկու աչքից զրկեցին,  
«Ո՛, բարձր հնչէ, իմ վշտու սազ, արար աշխարհն իմանալ,  
Թէ սիրելուց, թէ աչքերէց, ես յաւիտեան զրկուեցալ...»

Եւ լուց շուտ ջահէլ երգիչն...Պատուհանում դղեակի,  
Չքնաղ կոյսը ողջն իմացաւ—ելաւ յուզուած, սոսկալի,  
Ույդ կոյր երգչի խաղը շատ էր մօտիկ նորա վառ սրտին,  
Եւ հենց ինքը, կոյր երգիչը իսկ էր նորա սիրելին...

Յատկեց ելաւ իր սենեակից... Մօտ է երեկոն արդէն,  
Վառ աստղերն երևում են, լուռ են երկիրն ու ամէն,  
«Իու ես, ո՛, ինչ անողորմ է քեզ հետ վարուել թշնամին,  
Բայց ես աւել բան չեմ ուզիլ... Քեզ չեմ թողնիլ ընաւին...»

Եւ պատմում են՝ այնուհետև թէ իշխանի դուստրն անշուք  
Կոյր աշուղի. սիրելու հետ ման է գալիս գիւղից գիւղ,  
Եւ աշխարհին, ողջ մարդկութեան, իրանց արկածն են պատմում  
Եւ թէ ինչպէս սիրելիներն նորից իրար են գտնում...

## IV

Ո՛տք, շունչ չկայ դղեակի մէջ, շուրջը քամին է փչում,  
Եւ հինաւուրց ուռիները մեղմ ու խաղաղ օրօրւում,  
Ճանապարհին, արձակ դաշտում մէն-միայնակ է կանգնած՝  
Ու լալիս է, ու պատմում է նա տխրագին այս արկած...»

## ԼՈՒՐ ԱՄՐՈՅԸ

Հովը գալիս ու խփում է Արփաչալի ափերին,  
Դու նստել ես՝ դէմքդ ուղղել մութ ու բարձր ամրոցին,  
Այդ ամրոցը շատ հեռու չէ Արփաչալի ափերից,  
Այդ ամրոցը քուն է մտել գետի անուշ օրօրից...  
  
Դու ասում ես. «Մռայլ ամրոց, ասա, ուր է սիրելիս»,  
Նա կանգնած է լուռ ու մռայլ, խօսքերիդ ձախն չի տալիս,  
Միայն բարձրում ցոլցոլում են, փսփսում են աստղերը,  
Միայն ներքև ափերի հետ խօսակցում են ջրերը...  
  
Դու ասում ես. «Մռայլ ամրոց, չի՞ որ նա քո մէջ կապուեց,  
Եւ քո ամուր պատերի մէջ ազատ կեանքին վերջ դրեց,  
Գիշեր-պահին լսում էինք նորա ձախնը գիւթական,  
Նա երգում էր յուզուած սրտով մի վառուած երգ լաղթական...  
  
«Իսկ վաղնց է՛ էլ չի հնչւում նորա երգը քո միջից,  
Էլ չի լսում շղթաների շառաչիւնը թախծալից...  
Նա ի՞նչ եղաւ... Դու կուլ տուիր... Բերան ունես վիշապի,  
Թէ քո մէջն ընկնողն երբէք չի մնալու կենդանի...»  
  
Հովը գալիս ու խփում է Արփաչալի ափերին,  
Դու նստել ես՝ դէմքդ ուղղել մութ ու բարձր ամրոցին—  
Այդ ամրոցը լուռ է, անխօս.. Ո՛, չի տալիս պատասխան,  
Այդ ամրոցը կուլ է տուել քո սիրելուդ լաղթական...»

1893 թ.

## ՓԱՐՈՒԱՆԱՅ ԼԻՃԵ \*

### I.

Լեռների մէջ, բարձր տեղում, խաղաղ լճակն է փռուել,  
Շուրջը՝ նորա լայն ափերին—թուփ, ծառաստան, այգիներ,  
Հանդիպակաց լայն ափերում երկու գիւղ կան տարածուած,  
Չեն խանգարում նոցա քունը ալիքները երգասաց...

Այստեղ՝ հանդէպ՝ մի գիւղի մէջ մի որդի կայ իշխանի,  
Զահէլ տղալ, սիրուն տեսքով, առողջ և շատ սիրելի,  
Այնտեղ՝ հանդէպ՝ միւս գիւղում իշխանի գուստը է ապրում,  
Երկնի աստղերն, արև, լուսին, նորա տեսքին զմալլում...

Գիշեր հասաւ... Սիրուն աղջիկն ահա տանից գուրս եկաւ...  
Չորս կողմ քնած... Երշընջում են ալիքներն երգ անբաւ...  
Նորա ձեռին մի ճրագ կալ,— հիւսեր թողած, աշխուժով,—  
Իշխան տղալ, նկատում ես, ջուրը ընկիր շտապով...

### II

Լուռ աստղերն են, փալիքալումեն լիի վերալ հիւսիսի,  
Լուռ քամին է, շնչող չկայ, լոկ խօսքերն են երկուսի,  
Թիժեռի պէս երբ հանդէպից տեսաւ տղան ճրագը,  
Չուրը ընկաւ, և լողալով նա հասել է այս ափը:

Ո՛, չգիտէք, շնառ են սիրում միմեանց երկու ջահէլներ,  
Խօսակցութիւն, համբուրներ ջերմ և հրաշոյրքի մեղմ ժամեր,

Ծանեթ. \* Փիշուէնէ (գիշերային թիթեռ), „Փարուանայ լիճ” կամ լինչաց անդացիները ասում են՝ „Փարուանու գեօլ” գանեռումէ Աղեքսանդրապուր հիւսիսային կողմը ձգւող կարագաչ լեռնաշղթայում: Այս լիճը երկի պատմական Փառափաննէ է (Զաւաղբում), որ յետոյ ժողովուրդը ո՞Գիշերային թիթեռի լիճ” լեզենդական անունն է տուել:

Աշխարհք չգիտէ, մարդ չի տեսնում, իսկ չի մատնում բնութիւն  
Եւ ամէն օր կը կնուռումէ այս սիրալին տեսութիւն:

## III

Բայց չար հոգին ինչպէս եղաւ խեղճ աղջըկան մոլորցըեց,  
Թէ կենսական սոսկ աղմուկը նորա միտքը շփոթեց,  
Օրիորէը դուրս է գալիս լճի ափը մի գիշեր,  
Նորա ձեռին չկար ճրագ, որ սիրելուն գրաւէր...

Իսկ սիրելին ջուրն էր ընկել... Մութ գիշեր է ու քամի,  
Այս կողմ-այն կողմ նա լողում է, մութ է, չկայ կալծ լուսի...  
Զրերի մէջ նա շրջում է, նա ճրագ է որոնում,  
Եւ յուսահատ կռիւ տալով խոր լճի մէջ խեղդըւում...

Այս տեսակ է գիշերալին թիթեռնիկը պըտըտում,  
Ու միշտ դէպի վառ ճրագը թռչում, բոլորը շրջում,  
Ո՛, օրին՛րդ, քո կրակիդ թիթեռ՝ տղան էր անահ,  
Օյդ պատճառով լճի անունը մնացել է „Փարուանայ“:

1893 թ.

## ԿՈՅՍ ՄԱՐԻՆԸ \*

## I

Օ՛, վառուել են կոյս Մարինի վարդ ալտերը, շրթունքը,  
Զահէլ-ջուլֆատ, զմալլուեցէք, տեսէք դէմքն ու աչք-ունքը.  
Ո՛չ Շիրազի վարդն է ալգալիս, ո՞չ ծաղկունքը դրախտի,  
Ո՛չ էլ Շամամն ու նարինջը հրապոյրք ունին այդպիսի:

\* Որպէս այս նոյնակիս և մի քանի հետեւալ լեզենտաներէ  
գործողութեան տեղը յոդովաւրդը պատմելիս չե որոշում: Թերեւ  
այդ տեղերը ներակում չլինեն, առայն ներակի լեզենտաները անունը  
տուի այն պատճառով, որ պատճառով ին ներակում:

Բայց վանք մտաւ սիրուն Մարին, չի ցանկանում ոչ մի բան,  
Երկինք, գետին, -ոչ մի փեսայ, ոչ չար բարին կենսական,  
Իստակ հոգով իրան տուեց աղօթքներին ու պասին,  
Երդում կերաւ միշտ, հանապազ զինուոր լինել Քրիստոսին:

Ո՞վ էր նորա միտքը գցել, ո՞վ ցոյց տուել այդ ճամբան,  
Մենք չգիտենք ու յալտնի չէ, սուրբե՞ր, թէ չար սատանան,  
Աստուած վկալ, արար-աշխարհ «ափսոս» ասաց, Մարին, քեզ,  
Կեանքը թողած, լոյս մարմնովդ որ մենաստան մտել ես...

## II

Քրիստոնէական վանք կայ կ'ասեն, բայց ճամբորդը, ժողովուրդ  
Մօտից անցնում խաչ հանում տսես թուրք է կամ թէ քուրդ,  
Անարգուած է սրբատեղին... Ո՛, այդտեղ հէնց կոյս Մարին  
Հոգով-մարմնով ընկաւ, կորաւ... ու վերջ դրեց իր կեանքին.—

Մեղկ աբեղան մենաստանի չխնայեց աղջըկան,  
Պոկեց, հանեց նորա կրծքից կուսութեան վարդն աննման,  
Եւ ժողովուրդն այդ օրուանից միշտ այդ տեղից անցնելիս,  
Արեղայի մութ անունը մեծ զզուանքով է տալիս:

Եւ „ափսոս“ ով գետեզերքի սիրուն ժայռին է նայում,  
Որտեղ Մարին զցեց իրան անդորր գետի ջրերում,  
Անգորը գետը լուս հոսում է, ու խօսում է, ու երգում,  
Եւ անցորդին տիրահռչակ արարմունքը այս պատմում...

## III

Օ՛, վառուել են կոյս Մարինի վարդ ալտերը, շրթունքը,  
Զահէլ-ջուլֆատ, զմալլուեցէք, տեսէք դէմքն ու աչք-ունքը,  
Ո՛չ Շիրազի վարդն է ալգալիս, ո՞չ ծաղկունքը դրախտի,  
Ո՛չ էլ շամամն ու նարինջը հրապոյրք ունին այդպիսի.

Բայց ննջում է կոյս Մարինը կապոյտ ջրի յատակին;  
Կանաչազարդ անկողնու մէջ, ծաղկէ պսակը գլխին,  
Զահէլ-ջուլֆատ, զուր ման միք գալ՝ էլ չի ելնիլ նա ջրից,  
Ո՛նա սաստիկ վիրաւորուեց կեղծ ու վայրագ աշխարհից...  
1893. Եւ.

## ԳԵՍԼ ՆԳԱՅԱ

## I

Լեռը բացուեց... Հարսը ելաւ քօղը գցեց ու նստաւ,  
Ապարանք կալ ալդ լեռան մէջ, հարսի փեսան լեռն է սեաւ,  
Կուրծքը բացել, իր կրծքի մէջ տեղ է տուել, պալատներ,  
Ոբակէս չունին ոչ մի երկրում թագաւորն ու իշխաններ...

## II

~~Զահէլթուրքը սէրը էր գցել համեստ, մաքուր հարսի վրայ,~~  
Երկինք-գետին, չար միտք ունէր-կուզէր իրան կին դառնայ,  
Իսկ ժիր հարսի ամուսինը վաղուց չկար ու չկար,  
Պաշտպանուելու համար չունէր սիրուն հարսը ոչ մի ճար...  
«Զէրան աղջիկ, — շոյող թուրքը մէկ օր ասաց ժիր հարսին,  
Դու ինձ հսմար թագուհի ես, տէր ես, իշխող իմ սրտին,  
Մուհամմէտի արքայութեան պարտէզներումն էլ անդամ,  
Չի լինելու, չիալ քեզ պէս հուրի-փերի աննման...»

Արի ինձ մօտ... Կին կրդառնաս... Արի փախնչնք իրար հետ,  
Չինար հասակ, վարդ ես տեղով... Բաւ չի խաղաս սրտիս հետ,  
Լեռան այծը քոնի նման չքնաղ պարանոց չունի,  
Փաղիշն էլ հարեմի մէջ չունի քեզ պէս գերուհի ...»

Ծանօթ. \* «Գելին-դայա» նշանակում է «Հարսի ժայռ» կամ «Հարսի լեռ», գանեռում՝ Արագածի արևելահիւսիսային կողմը, Աղեքսանդրապոլից Երևը Ժամ հեռաւորութեան վերայ գանուղ երկար լեռնաշղթայում:

Հարսը ասաց—Ոսկի՞ դառնաս, լժուրք, չեմ լինիլ ես քեզ կին,  
Եւ ինձ համար սարից, ձորից չկայ էլ լաւ ամուսին,—  
Փախաւ գնաց թուրքի ձեռից, Գեան-Գայի մօտ եկաւ.  
Հայ-քրիստոնեան կին կրդառնայ թուրքի տղային անիրաւ...

## III

«Լեռ, սիրուն լեռ, քեզ եմ ինդրում, պատուիր, կուլ  
տուր ինձ հիմայ,  
Սիրուն լեռան հարսը ասաց՝ աղաչելով անխնայ,  
Խաչի՞ սիրուն, կին չդառնամ անհաւատին, պիղծ թուրքին,  
Հաստատ մնամ իմ հաւատիս... և ուրիշի չլինիմ կին...»

Լեռը ուրախ բացուեց, կանչեց—Ե՛կ, քեզ գգուեմ իմ կրծքում,  
Հարսը ալնտեղ պատսպարուեց, գտաւ իրան փրկութիւն.  
Նորա առաջ արքայական պալատներ կան լուռ կանգնած,  
Նոցա տէրը ու թագուհին ինքը հարսն է ազատուած.—

Եւ երբ կուզէ, կըհրամալէ՝ շուրջը ծաղկունք կըբացուին,  
Եւ երբ կուզէ, կըցանկանայ—երգեր կ'երգուին քաղցրագին,  
Լեռը տիսուր ու միայն էր, ճոխ թանկագին գանձերով,  
Լեռը հիմայ խիստ հրճուամ է չքնաղ, սիրուն իր հարսով...

## IV

Երեկոյ է. ասաղ է շողում Գեան-Գայի գագաթին,  
Հարսի աստղն է, նա ելել է, նստել լեռան սուր ծայրին,  
Քող է գցել, քօղի տակից շուրջն է նայում անդադար,  
Հպարտ ու վեհ, ջինջ հայացքով ինչպէս հրեշտակը արդար...

## V

Բայց տես, անցաւ վառուած աստղը «Հարսի լեռան» գագաթից,  
Լեռը բացուեց... Հարսն իջնում է իր ճոխ պալատը նորից,

Թուրքի տղայ, զուր ես փնտրում, ձեռք չես գցիլ էլ նորան,  
Նա վաղուց է պսակուել է, կին է դարձել սև լեռան...

Գիշերները Շիրակ երկրի խրճիթների մէջ անշուք,  
Վստահ հարսի պատմութիւնը շատ կըլսէք այսօր դուք...

Նատ է գովում իմ երկրացին նորա վարմունքը ազնիւ,  
Նորա բերած գովասանքին չկայ համար ու հաշիւ,  
«Ալլրի հարսը... ջահել-ջահէլ թէպէտ թողեց աշխարհը,  
Բայց լոյս դարձուց նորա հոգին Լուսաւորիչ ս. Հայրը...»

Եւ երգում է իմ երկրացին ուրախութեան ժամերին,  
Նախահայրերն ու պապերը ոգեսորում են հոգին,—  
Զան գիւղացի, աւանդական երկրի զաւակ հարազատ,  
Ախաբէր, ի՞նչպէս սիրելի են խօսք ու երգերդ ազատ...»

1894 թ.

## ԽԵԼԱԳԱՐ ՀԱՐՍԸ

### I.

Սարերն են լալիս, անտառն է կոծում,  
Անտառն է կոծում, ձորը մըմնջում—  
Ի՞նչ է պատահել, ով է ինչ ասել,  
Ո՞վ է նկատել՝ «ունք կալ աչքիդ վեր»\*:  
Չգիտէ աշխարհ, չգիտեն մարդիկ,  
Բայց ալդ ուղիղ է և շատ ճշմարիտ,  
Որ սիրուն Մարօն խելքն է կորցրել,  
Ցնորքների մէջ ընկել՝ չէ ելել...

\* Ժամանակական գարձուածք, որ պարծ էն ածում՝ կամաց երմանին բնաւորութիւնների համար, որոնք չեն սիրում մինչեւ անգամ այսպիսի արդարացի նկատողութեան, որ աչքիդ վերէ ունի կայ:

Դեղձն էլ սիրուն չէր նորա լոյս դէմքից,  
Սարի խոտն երկար չէր նորա վարսից,  
Աչերը—աստղեր, հասակը—չինար,  
Հրապոյրք էր բուրում կրծքից սիրավառ...

Երբ նա գեռ հարս չէր, թագուհի էր նա,  
Հազարի սրտին իշխում էր վստահ,  
Բնութիւնն ու մարդիկ սպասում էին,  
Ում էր լինելու Մարօն ամօւսին...

### II

Մարօն կին դարձաւ, հարս է նազելի,  
Ամբողջ գիւղի մէջ մէկ հատ սիրելի,  
Շատ բաղդաւոր է,—հարուստ, լաւ տան մէջ  
Իր գեղեցկութեամբ նա տեղաւորուեց...

Չանցաւ վեց ամիս—մի օր իրիկուան,  
Մարօլին տան մէջ ուշաթափ գտան,  
Խառնուեցին իրար... նորան վերցրեցին,  
Եւ անկողնի մէջ տեղաւորեցին...

Նորան չէր օգնում տնական միջոց,  
Անխօս ընկած էր, չէր հանում լաց, կոծ,  
Մի քանի օրուայ հազիւ աչք բացեց,  
Եւ գլխին եկածը մի կերպով պատմեց.—

### III.

Եւ ձիաւոր էր գէնքով, զրահով,  
Երեկոյեան դէմ ալդ գիւղն է մտնում,  
Շատ տներ թողած՝ նա ձին քշելով,  
Տէրտէրանց դռան առաջ կանգ առնում...

—Մարօ, ինչու դու փախչում ես ալդպէս.  
Մարօն պատասխան չի տալիս նորան.  
—Մարօ, մօտեցիր, բան եմ ասում քեզ,  
Ես հիւր եմ եկել քո կեսրարի տան...—

Զայն չի հանում նա...Ուզում է գնալ,  
Մարօն տէրտէրին շուտով իմաց տալ,  
—Մարօ, մի գնալ, պէտք չէ իմաց տալ,  
Զամիչ եմ բերել, եկ իմ ձեռքից առ...—

Հարսը սարսումէ...Դողում է հարսը...  
Գիաւորը մօտենում բռնում է վարսը...  
Վազում է հարսը, որ իմաց անէ...  
Ալդպէս ուշաթափ տան մէջ ընկնում է ..\*

Այդ դժբաղդ օրից Մարօն ցընդըուեց,  
Երեսի վարդը անցաւ, թառամեց,  
Էլ չի աշխատում առոյգ, ժիր հարսը,  
Էլ չի գրաւում Մարօյի վարսը,

Տօն է կամ հանդէս՝ նա չի պճնըւում,  
Մարե՛րն են լալիս, անտառն է կոծում...

1893 թ.

Ծանօթ.\* Ներակում՝ չահէլ հարմների հետ այդպէսի դժբաղդ դէպքերը յաձախ են պատահում, որ չգիտես ինչ պատճառների վերացը էս: Անկած կած գիւղացու կնոջ կեանիքի պայմանները և ընտանեկան դրութենը գըլ խաւոր պատճառներից մէկը կըլենին այդպէսի դժբաղդ ութեան:

## ԱՆԿՈՉ ՍԲԵՂԱՆ

### I

Ծովակի մէջ փոքրիկ կղզին տարածուել է միայնակ,  
Կղզու շուրջը ծառն ու թուփեր մի-մի պարիսպ են անքակ,  
Մենաստան կայ կղզու վերալ, — աբեղաներ նորա մէջ,  
Իսկ նորանցից մինը ջահէլ՝ ծնողներից նուիրուեց....

Սստուածապաշտ ժողովուրդը այցելում է, ուխտ գալիս,  
Սղբատ վանքին, վանականին իրան վայել տուրք տալիս, —  
Ծնողների սրտի նուէր, ո՛, դու ջահէլ աբեղալ,  
Զգուշացիր, գեղցկուհին ուխտ է գալիս հենց հիմալ....

### II

Բարեհամբաւ ընտանիք է նստած թեթև մակոյկում,  
Սլանում է նուրբ մակոյկը՝ ինչպէս որորը ջրում, —  
Դուստրը նորա գեղեցիկ է, — ժարթիչները նետեր են,  
Ո, կըսպանեն՝ որի որտում ալդ նետերը թափանցուեն, ..

### III

Լուսադէմ է... Շատ են պայծառ, շատ են մաքուր աստղերը,  
Ղօղանջում են մենաստանի մեղմահնչիւն զանգերը,  
Ու ֆարաշան մինչև ոտներն, մինչև աչքերն՝ վեղարը,  
Շտապում են աբեղաներն աղօթքների տաճարը. —

Բայց դռան մօտ ուխտաւորներն չոքած շէմքն են համբուրում,  
Խսկ աղջիկը համբուրում է... Աչքերը շուրջն է գցում,—  
Նորանց նետերը թափանցում են աբեղալի սրտի մէջ,  
Եւ անդորր, լուռ սիրտը նորա պղտորում է մէկից մէկի...

Նա չի կարող էլ ալօթել... Սրտում յուզմունք է զարթնում,  
Ալդ յուզմունքը անյաղթելի մի խորունակ վէրք է դառնում,  
Նա լուռ ու մունջ և խոռված դուրս է գալիս տաճարից,  
Եւ աշխարհի հրապոյրները անցնում նորա առաջից...

## IV

Ուխտաւորները սլանում են կղզուց մակոյկով սահուն,  
Կղզու ափին լուռ աբեղան կանգնած՝ հեռուն է նայում,—  
Վերջնալոյսի ծիածանից վառուել են ողջ ջրերը,  
Գրաւում են, հրապուրում են դէպի աշխարհն ու սէրը...

Մակոյկի մէջ թիավարը երգ է երգում, մի հին երգ,  
Պարզ ջրերը մրմնջում են, շշնջում են մի համերգ,  
Ափի վերայ ժայռին կանգնած՝ հեկեկում է աբեղան,  
Ֆարաջայի փէշով սրբում արտասուքները դաժան..,

Եւ այնպէս է աշխարհալին կեանքը քաշում, փաղաքշում,  
Ու այնպէս է նա անարգուած, այնպէս միայն է, տրտում,  
Որ պարզ ջրերի ալիքները բարիք արած կըլինէին,  
Եթէ նորան նոյն ալդ ժամին դէպ' անդունդը տանէին...

Մակոյկի մէջ թիավարը երգ է երգում, երգ հնուց,  
Պարզ ջրերը շշնջում են արկածներից շատ փաղուց,  
Ափի վերայ աբեղան էլ ձայնացում է ալդ երգին,  
Ու կորչում են, անհետանում ալդ երգերը ախրագին...

## V.

Մութ է շուրջը... Խոր գիշեր է... Ազօթքները կատարած՝  
Անդորր հոգով քուն են մտել վարդապետներն սրբակեաց.—  
«Ամի՞, վեր կաց, ժամանակն է, ջուրն էլ մեղմ է, հանդարտած,  
Նուտ, ամի՞ ջան, այն կողմ անցնենք, քանի մօտ չէ լուսաբաց:»

Քնաթաթախ վեր է կենում ծեր թիավարն իր տեղից,  
Ոտք ու գոտին ամրացնելով՝ դուրս է գալիս նեղ խուցից,  
—Ի սէր Տիրոջ.., որ իմանան... ի՞նչ ջուղապ տամ, ի՞նչ ասեմ,  
Ես հախս առնեմ... Բա դուր, հայր սուրբ, Տէր, դըւատ տուր  
պրծընեմ...—

Զայն չի հանում լուռ աբեղան... Ափն է դիմում շուտափութ,  
Նա երդուել է չդառնալու մենաստանը բարեգութ,  
Մեծ աշխարհը հրապուրում է, գրաւում սէրը կենսական,  
«Նուտ, ամի՞ ջան, շարժիր թիեր, շուտ ափ հանիր, քեզ զուրբան:»

## VI.

Կանգնած ժայռ կայ կղզուափին, բարձր է ժայռը ու ամուր,  
Շատի սրտին իր պատմութեամբ նա բերումէ միշտ սարսուռ.  
«Կ'ասեն, աղբեր, ժամանակով մի ջահէլ աբեղայ կար,  
Չդիմացաւ վանքի կեանքին... ու գլորուեց ժայռից վար...

Ինքնասպան մարդու հոգին Աստուած ի՞նչպէս ողորմի...»  
Բայց մթի մէջ սլանումէ մակոյկը աբեղալի.  
«Ամի՞, շարժիր, յաջող ժամ է... Ջուրն էլ մեղմ է, հանդարտած,  
Նուտ, ամի՞ ջան, այն կողմ անցնենք, քանի մօտ չէ լուսաբաց...»

## Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

(ՊՐԻՎԻԼԵՋԻԱՆ ԱՌԱԽԻԿԱՆԱԿԱՆ)

Յաղոթս ապաւենի, և տեսանի,  
ոչ թէ քուն երադ և ոչ յարթնու-  
թեան տեսիլ, այլ ՚ի սըսնի գոր-  
ծարանի երկութայցեալ հոգւոյն  
աչաց թաթ-ձեռին աչոյ՝ դժելով  
ի վերայ վեմի:

I

ԽԱՐԵՆԱԿԱՆ.

Սիրտ են շարժում, կեանք են տալիս ժողովրդի ասուածքներ,  
Նոքա լի են անկեղծութամբ, նոքա վառում մեր սրտեր,  
Հայ ժողովուրդ, ես սիրում եմ կեանքիդ վիշտն ու խնդութիւն,  
Ես սիրում եմ նախնիքներիդ աւանդական պատմութիւն...

II

Տարօնի մէջ համեստ գիւղ կար-նորա անունն էր Հացիկ,  
Կաթ է բյում, մէզր է ծորում այդ երկրիցը գեղեցիկ,  
Այդ գիւղի մէջ ծնուեց, սնուեց Մեսրոպ Մաշտոցը արդար,  
Ներսէս Մեծին աշակերտեց,-եղաւ գիտուն ու հանճար:

Եւ երբ նորան աշխարհալին բաղդը ժպտաց կեանքի մէջ,  
Երբ ապահով արքունիքում քարտուղար էր նա և մեծ,—  
Զկամեցաւ այնտեղ մնալ—սիրտն իղձերով հոգեոր,  
Թողեց պաշտօնն, առանձնացաւ ու դարձաւ նա ճգնաւոր...

III

Մի խուսափիր, անցորդ եղբար, տեսիլք չէ քո առաջը,  
Սուրբ Մեսրոպն է լեռան լանջում, նա լալիս է իր լացը,  
Միայնակ է... Տառապանքի դրօշմ է շողում վեհ դէմքին,  
Ճակատը լայն, մազերն երկար, սև վերաբկու կայ հագին:

Լուռ ու անձայն, ձեռքը ճակտին, քարի վերալ քաշ նստած,  
Նա չի յալտնում միտքը մարդկանց, չի մըմնջում մի բան ցած:

Իսկ նորա շուրջ՝ բնութիւնը—լուռ ու անխօս, ինչպէս նա—  
Չի խանգարում մտածմունքին, ձայն հանելու չէ վստահ,—  
Թաշտահաւն է երբեմնապէս հեռութիւն մեղմիկ ձայն հանում,  
Եւ երկնալին վառ աստղերը խորհրդաբար շըշընջում...

III

ՎԵհ զգացմունք, անշէջ եռանդ բռնկել են նորա մէջ,  
Աստուած նորա վառ հոգու մէջ սուրբ զգացմունք արձարծեց.  
Նա կոչուած է քարոզելու ժողովրդին անուսում,  
Հայոց լեզուով սովորեցնելու Աստուածաշունչն հայերուն...

Բայց նա ի՞նչպէս սովորեցնէ, երբ գրուածքն է յունարէն,  
Թարգմանելու համար չկան, չունինք տառեր հայերէն...  
Ժողովուրդը խարխափում է, չունի լեզու գրական,  
Չի հասկանում եկեղեցում Փրկչի խօսքերը կենսական...

Ահա յուգուած վարդապետը այդ մորմոքն է մորմոքում,  
Հասկանալի լեզուով կուզէ ժողովրդին տալ ուսում,  
«Փրկարար Տէր, շնորհք տուր ինձ, Քո հաւատը պահպանեմ,  
Քո խօսքերդ, Քո Ս. Դիրքը հասկանալի դարձընեմ...»

IV.

Հողմն է շըրշում լեռան լանջին... Ամալի է չորս կողմը,  
Մթին լեզուով քարին, ձորին, բան է խօսում այդ հողմը...—  
Բայց վարդապետն իր վեհ մտքով խորասուզուած է և լուռ...  
Դիշեր հասաւ.. Փալլիալումեն երկնի աստղերն ինչպէս հուր...

## V.

Ուրախացիք... Տես, Ս. հայրը տանջանքի մէջ հոգեկան՝  
Յնիս է տեսնում, կեանք է զգում, սպասում է մի նոր բան...  
Բարձրացրեց նա գլուխը... Նորից ձեռքը ճակատին—  
Խորասուզուեց աստուածային երազի մէջ առանձին...

## VI,

Այդ հրաշք է, այդ ցնորք է, թէ երազ է անխափան—  
Ս. Մեսրոպի հոգու առաջ պատկեր բացուեց դիւթական։  
Նա տեսնում է վառ լոյսի մէջ աջ ձեռքի թաթ երևեց,  
Վէմի վերայ մանրամասն հայոց տառերը գրեց...

Զի ցանկանում նա սթափուել այդ երազից լուսաւոր,  
Վեր է առնում մազաղաթին նա տառերը ձախնաւոր,  
Եւ կազմելով «ալբենարան»՝ նա Ս. Գիրքն է թարգմանում,  
Եւ հայերէն աւետարան ժողովրդին պարզեում...

Ոիրտ են շարժում, կեանք են տալիս ժողովրդի ասուածքներ,  
Նոքալի են անկեղծութեամբ, նոքա վառում մեր սրտեր,  
Հայ ժողովուրդ, ես սիրում եմ կեանքիդ վիշտն ու խնդութիւն,  
Ես սիրում եմ նախնիքներիդ աւանդական պատմութիւն...

1894 թ.

## ՎԱՆԱՅԻ ԲԵՐԴԸ

Խաղում է ծովտկ կապուտ ջրերով,  
Փայլում են ջրեր լուսնի շողերով,  
Ծփում է ծովակ իր խաղաղութեամբ,  
Իր լուռ ափերի նուրբ գեղեցկութեամբ։

Եւ այդ ափերին—ճոխ ու ալգաւէտ,  
Ինչպէս հրաշալի մանեակ ծաղկաւէտ,  
Այստեղ և այնտեղ բնութեան գօտիով,  
Կապուած են լեռներ գեղեցիկ շարքով։

Ու շատ աւաններ, մարդաշատ գիւղեր—  
Թաղուած են բերրի այգեստաններում,  
Եւ հրեշտակալին քնով փափկաբեր,  
Կարծես կախարդուած՝ բոլորն է նիրհում...

Այստեղ ծովակի բարձր եղերքին,  
Բուսականութեան զարդով ճոխացած՝  
Դեռ շատ վաղեմի նախնեաց դարերից,  
Հին Վան քաղաքն է ժայռից բարձրացած։

Նա բարձրացել է՝ բնութեան արուեստի  
Ոզի ներշնչող հպարտ ամրութեամբ,  
Եւ միջնաբերդը նորա ահռելի—  
Բազմել է իրան վեհ գեղեցկութեամբ։

Հպարտ բազմել է... Նայում է երկինք...  
Ասես արծիւ է մութ ժայռի վերան,  
Նորա ամրապինդ մի որմի տակին՝  
Ահագին վիրապ կայ լայնաբերան։

Սա գնացողին տանում է շատ խոլ\*,  
Տանում է հեռու՝ խորքերը երկրի,  
Եւ ստորերկրեայ ճամբէքով մոլար,  
Բերում հասցնում է լատակը ծովի։

Այստեղ բացւում է մի գռնակ ոսկէ,  
Եւ մարդուն տանում դրախտը երջանիկ,

Մահով. \* Ոտանաւողի այս լեզենդական մասը վեցըրած է թուրք հը-  
նազէտի պատմածից: (նկայծեր՝ Բ. Ժ. Ե. գլւ.)

Ալստեղ ապարանք—կիճ ու գոհարէ—  
Բազմում են... շողում իսկոյն առաջիդ:

Եւ մշտադալար մարջանի ծառեր—  
Սփռում են յաւէտ իրանց ստուերներ,  
Եւ յաւերժական հուրի-փերիներ—  
Ճեմում են այնտեղ՝ պայծառ քան արև...

Հազարան-բիւլբիւլը կերակրում է  
Այնտեղ մարգարտի շողուն հատիկով,  
Եւ փղոսկրեալ վանդակի միջից,  
Նա գեղգեղում է հրաշալի ձայնով...—

Մի ակնթարթում նա հազարաւոր  
Եղանակներ է աշխուժով փոխում—  
Իւրաքանչիւրից՝ նա հազարաւոր—  
Նոր նուագներ է յօրինում, երգում...

Եւ անուշաբոյր այնտեղ վարդենիք,  
Նորա կախարդիչ երգերի ձայնից՝  
Ընկնում են, ընկնում քաղցրութեամբ անվերջ,  
Մշտնջենական զմալմունքի մէջ...

Այնտեղ ծերութեան չկան ծանը օրեր,  
Այլ միշտ ժպտում են մանկութիւն և սէր...  
Բայց ոսկէ դուռը միշտ փակ է նորան.  
Ով որ դէրվիշից չունի թալիսման...

1888 թ.

## ՍՏԵՂԾՈՂԻ ՔՂԾՆՑԼ

Երբ ողջը քնեց... Լոեցին ձայներ,  
Խաղաղ գիշերը երբ տիրեց երկրին—  
Անուշ բուրեցին գողտրիկ ծաղիկներ,  
Եւ ոգին երգեց մի երգ տիրագին...—

Խաղաղութիւն է ... ձնվն է սօսափում...  
Եւ փարում ոգու մազերը չքնաղ,  
Շնչում է բոյսը... Եւ վերև՝ բարձրում,  
Կապոյտ երկինքը տարածում խաղաղ...—

Այդ Ստեղծողի քղանցն է անծալը—  
Այդպէս տարածուել աստղերով մոլոր,  
Ո՞րտեղ է Ինքը— նա է ողջ աշխարհ,  
Նա ջնուրն է, նա բոյս, նա կեանքն է բոլոր...—

Եւ երեմնապէս նա թափ է տալիս—  
Իր անծալը քղանցը մեր երկրի վերայ,  
Անչնափ են թափւում նորա վերայից  
Վառվուուն աստղեր...— և գուշակում մահ...

Սիրուն է գիշեր... Եւ ոգին կրկնեց  
Երկնալին կեանքի երգը տիրալից,  
Տէրն իր քղանցը ահա թափ տուեց...—  
Եւ շատ աստղիկներ ընկան այնտեղից...

1891 թ.

## ՎՃՏԻ ԱՃԽԱԲՀԷ

### I

«Անբաղդ կի՞ն եմ... Որդի չունեմ... Որդիներս մեռնումեն,  
Սշխարհ, մարդկի, ճար ցոյց տուէք՝ ալդ փորձանքից ազատուեմ,  
Ի՞նչ ցաւերով ծնում էի, մեծացնում իմ կաթով,  
Հողի բաժին դարձան բոլոր՝ ցաւոտ սիրտս տանջելով։

«Դուք իմ ցաւիս մի ճար արէք, իմաստուններ, գիտուններ,  
Ժողովրդի հասկացողներ, պառաւ մայրեր, անոյժ ծեր—  
Սուրբ չժողի, որ ուխտ չերթամ, վանք չժողի առանց մոմ,  
Եւ „նետ գցել“, „աղօթել տալ“, պասեր պահել,—երկար ծոմ։

«Յաւ կալ, վիշտ կալ իմ վշտիս պէս, անբաղդութիւն կալ այսպէս,  
Ողջ աշխարհը եթէ ման գտա՝ մէկը կըլինք ինձ պէս,  
Անբաղդ կի՞ն եմ... Որդի չունեմ... Մեծ է ցաւս, տարօրէն,  
Հասկացողներ, ճար ցոյց տուէք՝ ալս փորձանքից ազատուեմ...»

Որդի ծնաւ անբաղդ կնոջ—ուրախացել է սիրտը,  
Բայց ով գիտէ, երկար կ'ապրի, չք նորոգել հին վիշտը,  
Նորան ասին. «Մի բան միայն կօգնէ ցաւիդ, ալ կնիկ,  
Անվիշտ մէկ մարդ պիտի կտրէ որդուդ համար մէկ շապիկ...»

### III.

Ընկաւ կինը գիւղից քաղաք, լնկաւ կինը տանից տուն,  
Ահա մի մեծ փառաւոր տան՝ նա դանդաղ է մօտենում,—  
Մարմարիօնեալ սանդուխներ են ճոխ փոռւածքով տարածուած,  
Ծառաները համազգեստով շքեղ սրահում լուռ կանգնած։

Շուրջը զուարթ խիտ բոյսերով ծաղկամաններ քարեղէն,  
Իսկ վանդակում դեղձանիկը գեղգեղում է տարօրէն...  
Երկնչելով մօտենում է կինը—համեստ ու խոնարհ,  
Աղաչում է ծառաներից—ներս թողնեն թէ կայ հնար։

Դուրս են մղում հայկոյելով առանց նորան լսելու,  
Աղաչում է ու լալիս է, ու չի գնում նա հեռու.  
Նորա ձայնից դուրս է ելում իշխանը հետաքրքիր  
Եւ հրամայում, որ ներս թողնեն՝ եթէ ունի մի խնդիր։  
Բարձրանում է, ներս է մտնում, լուռ ու կամաց սկսում.  
«Տէր-մեծատուն, աղաչում եմ, ողորմացիր իմ որդուն,  
Դու ես անվիշտ աշխարհի մէջ, որդուս կտրէ մի շապիկ,  
Թո՛ղ երկինքը փոխարէնը ուղարկէ կրկնապատիկ։»

Մռալ, դժնեալ մեծատունը պատասխանեց անվրդով.  
—Սխալւում ես, տարաբար կին, վիշտ շնտ ունիմ, վիշտ է ծով,  
Ճշմարիտ է՝ փողաւոր եմ, գիրքս բարձր ու յայտնի,  
Բայց աշխարհը արդէն գիտէ որդուս վարքը զազրելի։  
—Ի՞նչպէս պատմեմ սրտիս ցաւը՝ վատնեց նա իմ մեծ գանձս,  
Իսկ գառնագինն այն է, որ նա պղծեց անունս ու կեանքս.  
Մի խնճուքում հերոսաբար նա սպանեց մէկ մարդու,  
Արդարաբար աքսորեցին-յաւիտեան չենք տեսնելու։

—Իսկ մեծ որդիս կինը թողած՝ տուն չի գալիս տարիքով,  
Խղճուկ հարսը անմխիթար միշտ ողբում է կսկիծով,  
Մեծ աղջիկս էլ ամուսնու հետ չէր հաշտըւում, ունէր դաւ  
Ուր է հիմայ, ում հետ ապրում, մեզ յայտնի չէ այդ բնաւ։  
—Ով կարող է լսել, տանել, լացն ու կոծը ամուսնուս.  
Գանգատները ու ողբերը՝ գիշերները մինչև լոյս,

Հանգիստ չունիմ... Քունս կտրած.. Կինս հիւանդ... Ես տկար...  
Աշխարհ գիտէ, Տէրն է վկայ, — չկայ ինձ պէս ապիկար...

— Հարցուր, կ'ասեն, վաճառականը գուցէ, որ վիշտ չունենայ,  
Իսկ ինձ համար կեանքը թուն է, սարսափելի՛ ինչպէս մահ...  
Անբաղդ կինը ոչինչ չասաց, ելաւ—անխօս ու լոիկ,  
Ու փողոցում նա ներս մտաւ հարուստ խանութը մօտիկ:

## IV.

Հաշիւների վերայ՝ լուռ, մունջ—վաճառականն է նստած,  
Դէմքը մռալը, հոգսերով լի, փնժինթում է մի բան ցած,  
«Աղա, խնդրեմ, ողորմացիր, գիտեմ զուրկ ես դու վշտից,  
Նապիկ կարէ դու քո ձեռքով, որ ազատուիմ փորձանքից:»

Վեր բարձրացուց գլուխը, նայեց, ասաց կոպիտ, խստագին,  
— Ի՞նչ ես խօսում, ցնորուած ես, ի՞նչ փորձանքէ, անմիտ կին,  
Ե՞կ փորձանք տես, խելագարուիս, ես չեմ ապրում իմ կեանքով.  
Կարձատեսին ի՞նչպէս պատմեմ, որ փորձանքիս չափն է ծով...

—Միլիօն արժէր շոգենաւս՝ ծովի յատակը անցաւ,  
Իսկ նա վաղուց դրամատան մէջ յայտնուած էր իբրև գրաւ,  
Պահանջումեն... Ո՞րտեղից տամ, — արժեթղթերս են ընկել,  
Այս դրութեամբ ես կարող եմ որ և է գործ սկսել:

— Զամուսնացած իմ եղբայրս էլ շատ է վատնում անհաշիւ,  
Իսկ հիմայ էլ նեղ միջոցիս՝ պահանջում է մաս լրիւ,  
Բայց չեմ կարող, պարտական չեմ պատմել սիրտս լիովին,  
Սէրն Աստուծոյ, դուրս եկ գնայ, կըզայրացնես ինձ կըկին: —

Ասաց՝ զարկեց նա ճակատին, նորից գլուխը կախեց,  
Կինը անձայն ելաւ դռնից, դանդաղաբար նա շարժուեց:

## V.

Լայնատարած փողոցի մէջ՝ անցաւ երեք՝ թէ չորս տուն,  
Նեղ փողոցի մի անկիւնում արհեստաւորն էր բանում.—  
«Բարի՛ լոյս քեզ, ասեմ, աղբէր, էլ ի՞նչ ծածկեմ ես քո քով,  
Խնդիր ունիմ, անվիշա մարդ ես, շապիկ կտրէ քո ձեռքով:»  
— Ի՞նչ կայ, հարցը եց արհեստաւորը... Կինը նորան բացատրեց,  
— Ես փչանամ, քուրս, մէրս, եթէ սուտ կայ խօսքիս մէջ.  
Աստուած գիտէ, ի՞նչ խեղճութիւն, ի՞նչ դառն օրեր եմ քաշած,  
Իսկ հիմայ էլ՝ ուժ որդոց տէր, չեմ հասցընում օրուայ հաց...  
— Քանի՛ տեսակ էլ ցաւ կըլինի, — տղայ չունիմ, օգնական,  
Բոլորն աղջիկ, -մեծը տասչորս, ինքն էլ կաղ է ու անբան,  
Իսկ փոքրերիս մէկը շիլ է, բայց խելօք է, տնարար,  
Կինս էլ տարուայ ուժ ամիսը — հիւանդ է ու ցաւագար:—  
«Էլ ի՞նչ ասեմ, աղբէր, գիտեմ, ճշմարիտ է ասածդ,  
Մնաս բարով, ելնեմ երթամ... չնորոգեմ քո դարդը...»  
Ասաց՝ ելաւ կամաց-կամաց... Նա դուրս եկաւ լայն ճամբան, —  
Ահա խմբով ոտնաւորներ նորա առաջ դէմ դիպան:

## VI

Առուգ եզներ խարտեաշ, կարմիր, կամարաձև պողերով,  
Տուն էր քշում երկրագործը և երգում էր անվրդով.  
Ճօճում էին անասուններն — պարանոցները կախ-կախ,  
Գնում էին յոդնածները հանգստութեան մինչև վաղ...  
Իսկ յետևից սայլին դրած բերում էին գութանը,  
Գիւղականի կեանքի, մահուան դատաւորն ու գիւանը,  
Ուսերին փոցիս ու գերանդին... Քաղից պրծել են արդէն,  
Հարս ու աղջիկ մարդկերանցով դէպ տուն վերադառնում են...  
Խոնջացել են ձեռք ու ոտքեր... «Բարով անուշ քուն մտնէք,»  
Մօտենում է երկրագործին ու խնդրում է կինը հէգ՝

«Աղբէր, գիտես, նոր բան չամեմ՝ բաղդաւոր ես քեզ համար,  
Դու քրտինքիդ աշխատանքով ապրում ես միշտ անդադար.  
«Իրաւունքը ձեռքիդ մէջն է, որքան կուզես՝ գու տէր ես,  
Խաղաղութեամբ գործդ ես տեսնում, ոչոքի էլ պէտք չունես,  
Ի՞նչ ասել է վիշտ, տառապանք, չունիս ու չես ունենալ,  
Աղբերացու, —բարի գործ է, շապիկ կտրէ ինձ համար:»

—Աստըուն է յայտնի, քուրս, ես քեզ բնչափս համոզեմ,  
Լաւ էր անհաց ես մեռնէի, քան թէ այսպիս տանջուեմ,  
Թող ողորմի տէրը հոգուն — իմ հանգուցեալ հայրս ծեր —  
Նեղն էր ընկել-հինգ կոտ ցորեն իրան պարտքէր վերցրել...  
—Ահա ես էլ ծերանում եմ, -աչք չեմ բացել ալդ պարտքից.  
Հինգն եղելէ՝ հարիւր տասնհինգ. հինգ որ պրճնում ենք կալից —  
Գլխիս վերև պարտատէրը կանգնում չափում է, տանում...  
Մնացածն էլ միւս տարի... իրան պակասը հաշւում...

—Փառք Աստուծոյ... չըխնայեց, եղբօրս, իմ որդիներ...  
Իրան գործն է... Կարամ խօսել... Պէտք է խօսքը կատարել...  
Համա, քուրս, Աստուծած գիտէ պարտքից աչք չեմ բաց — անում...  
Հարկ է, բեկար, ոշուատ է... գիտես գեղի խեղճութիւն...  
—Աշխատանքը, Աստուծոյ բերքը, դառն վաստակ շատքազը են,  
Բայց տեսնում ես՝ գլխիդ վերև պարտատէրել բուսնում են,  
Կարամ չտալ, տաս էլ՝ էլի չես պրճնիլ մէկ անդամ,  
Կ'երժայ ալդպէս որդոց որդի ու կըլինի ժառանգական: —

Մի «ախ» քաշեց երկրագործը... իրաւ, սրտից էր «ախ»ը,  
Ի՞նչպէս խոր են արմատ գցել կեանքի նեղ օրն ու վախը,  
Անբաղդ կինը էլ ձայն չհանեց, զգաց խեղճի դրութիւն,  
Շարունակեց ճամբան գնալ՝ անխօս կերպով ու տրտում...

## VII

Համազգեստով հին ու խանկրած, վտիտ, գունատ ու անձայն,  
Թղթերի մէջ կարծես թաղուած՝ գիր էր անում պաշտօնեան,  
Փռնչում էր երբեմնապէս — ձայներ հանում բերանից,  
Ծխախոտի ծխով ծածկում գլուխը զուրկ մազերից:

«Աղա, ինչու դու քո կեանքում պիտի տեսնես նեղութիւն,  
Փառք Աստուծոյ, ամէն ամիս ո-օճիկ ես ստանում,  
Աղաչում եմ, օգնիր ինձ գու, որդուս կտրիր մի շապիկ.»  
Անբաղդ կինը պաշտօնեալին ասաց ձայնով իւր մեղմիկ...

Սափնթինթաց, ձայն չըհանեց, թերթեց թղթերն ու խառնեց,  
Յետոյ գարձաւ կնոջը նայեց և իւր գիրը շարունակեց,  
«Ի՞նչ կըլինի, աղա, դու ինձ միսիթարիչ մի խօսք տո՞ւր»  
Անբաղդ կինը կըլինեց խօսքը պաշտօնեալին անխօս, լուս:

— Լաւ ես ասում, ալ կին, նորան պատասխանեց պաշտօնեան,  
Գուցէ կեանքում լաւ ապրէի՝ համ չառնէի նեղութեան,  
Եթէ սկզբից՝ մինչեւ օրս մենակ գլուխ լինէի,  
Եւ ստացած ո-օճիկս լոկ ինձ վերայ ծախսէի:

— Բայց եկ գու տես, ամուսնացայ՝ նոր ցաւ գտայ ինձ համար.  
Ընտանիքս տարից տարի բազմանում է անդադար,  
Երկու հոգուց գարձել ենք — ութ, հաց են ուզում՝ հագնելիք,  
Թոճիկս էլ նոյնն է մնացել, չունիմ ուրիշ առնելիք:

— Անտանելի՛ բան է դարձել ալս աշխարհը ինձ համար,  
Աղքատութիւնը յարձակուել է վրաս աչքերով հազար,  
Ահա կարծես ուզումէ նա կնո՞ցս, որդո՞ցս կլանէ,  
Բայց թողել է մի ժամանակ, կարծես խղճում, խնալում է:  
— Հաւատած ինձ, այնպէս մութ է, աշխափէս մոայլ ապագաս,  
Հոգսերի մէջ, տառապանքում ինձ կըլիրէ լոկ օրհաս,

Յոյս էլ չունիմ, որ երբ և է լաւանալ իմ գրութիւն,  
Մնան բարով, շտապում եմ, ունեմ ձեռքիս գրութիւն...—

Ասաց, դարձաւ...և թափ տուեց իւր գլուխը դարաքաշ,  
Իսկ կինն ելաւ և մօտեցաւ եկեղեցուն սրբատաշ,...

## VIII.

Եկեղեցու պարսպի տակ նստած էին շատ ծերեր,  
Այդպէս նստած միշտ խօսում են, պատմում անցած շատ անցքեր,  
Մօտենում է նոցա կինը, ինդրում որ մի ճար անեն.  
«Դուք փորձուած էք, շատ էք տեսել կեանքում ցաւեր տարօրէն.

«Սակայն գիտեմ, այդ չէր կարող ձեր մէջ դառնութիւն գցել,  
Ամենալն բան տեսած, լսած՝ դուք դարձել էք իմաստասէր.  
Ուրախութիւն, խորին վշտեր հաւասար են ձեզ համար.  
Ի՞նչ կըլինի, շապիկ կտրէք՝ հագնի որդիս մէկուճար:»

Ծերերից մին տատանելով իւր գլուխը ալեոր՝  
— Ա՛յ կին, ասաց, չեմ հասկանում, դու պատմում ես բաներ նոր,  
Բայց թէ ես եմ աշխարհն անցել, ես եմ ապրողը երկար,  
Մինչև օրս, էլի կասեմ՝ «Փուչ ու դադարկ է աշխարհ»:

— Լուսամուտի նման բան է՝ մարդիկ կուգան կընայեն,  
Էլի նորից յետ կըդառնան մարդիկ՝ ինչպէս եկել նն,  
Բայց լաւ կըլինի չգան նայեն լուսամտից սոսկալի,  
Բացի ցաւից, տառապանքից բան չեն տեսնիլ հիանալի...—

Կամաց կերպով գլուխը շարժեց ու հեռացաւ ծերերից,  
Մտքում ասաց. Անշխարհի մէջ մի՞թէ չկայ մարդ անվիշտ,  
Էլ ում դիմեմ, այսպէս մնամ—առանց դեղի, հոգատար,  
Զէ, ես կ'երթամ տէրտէրի մօտ՝ նա իմ ցաւիս կ'անէ ճար:»

## IX.

«Ծածկուած դէմքով նաներս մտաւ, աջը առաւ՝ Օրհնեա տէր».  
— Աստուած օրհնէ բնչ կալ, քուրս, չլինի բան է պատահել—  
«Տէր հայր, ասաց, քիչ կանգ առաւ... Համարձակութիւն չլինի—  
Բացի քեզնից ոչ ոք չկալ, որ առանց ցաւի լինի:

«Աղաչում եմ, ոտքդ եմ ընկնում, տէր հայր, ներիր իմ խօսքիս,  
Մի շապկացու դու քու ձեռքով կտրիր, հագնի իմ որդիս...»  
Մէկ անգամից այդ խօսքերին չպատասխանեց քահանան,  
Պլուխը կախեց, «տէր-ողորմեան» քաշեց ու ասաց նորան...

— Միամիտ ես, դու Ս. Գրքից օրինակ առ խրատալից,  
Մեծատնից մինչև բանուորն՝ երբէք ազատ չեն վշտից,  
Միթէ հօտիս խեղճութիւնը ցաւ ու վիշտ չէ ինձ համար,  
Իսկ մարդկութեան հնարաւորէ առանց ցաւ ու վիշտ մնալ.

— Ճշմարիտ է, մարդիկ կեանքում վարձատրում են մեզ առատ,  
Բայց ինչ օգուտ՝ շատ ժամանակ մենք տիսուր ենք, լուսահատ,  
Քուրս, երբէք սնոտի բաներ պէտք չէ մտքից անցընել,  
Ս. Գիրք կարդա՛, Տէր Աստըծուն հաւատած դու անձնուէր...

— Կարող ես դու անվիշտ գտնել համայն արար-աշխարհում,  
Թէպէտ երկրի արքաները քիչ են տեսնում նեղութիւն:—  
Ելաւ կինը, աջը առաւ, լուռ ու անխօս դուրս գնաց,  
Մեծ արքայի պալատ կ'երթամ, ոտքը կ'ընկնեմ նա ասաց...

## X

Մեծ քաղաքում շքեղազարդ ճոխ պալատն է բարձրանում,  
Նորա ծալրեր խիտ ծառներից հազիւ-հազ են երեսնւմ,  
Սրահի մէջ շատրուանը մարգարտափայլ հոսանքով—  
Զուր է գլորում, երգէ երգում—լաւիտեան կեանք անվրդով..

Արեգակի շողերի տակ՝ հարաւային ճոխ բոլսեր  
 Փայլփայլնւմ են...ու բուրում են անդորրութիւն, անվիշտ սէր  
 Իսկ ծաղիկներ, հազարերանդ, սքանչելի փայլերով,  
 Դրախտային ժռչունների երգն են լսում անվրդով։  
 Վիշտ կ'որոնես այդ սահմանում, նա այդտեղ չի լինելու—  
 Զուգուած նաժիշտ, ծառայողներ լսումեն պատրաստ և հլու,  
 Դու, անբաղդ կին, մի ուշանալ, այդտեղ կըլինի անվիշտ մարդ,  
 Մեծ թագուհին կ'ազատէ քեզ նեղութիւնիցդ անպարտ։  
 Սրահի մէջ մտաւ կինը, հարցնում է թագուհուն,  
 Երբ անարգել մօտը տարան,—նա փաթաթուեց ոտքերուն,  
 Բարձր ձայնով նա լալիս է, ջերմ համբուրում է ոտքեր,  
 Իսկ թագուհին հարցնում է՝ «Ի՞նչ կայ, ինչո՞ւ է եկել։»  
 «Ողորմացող տէր թագուհի, տուն չթողի ման եկայ,  
 Մարդ չթողի, որ հարցնեմ՝ ցաւիս համար դարման տայ,  
 Թէ մեծատուն,—վաճառական—արհեստաւորն ու տէրտէր—  
 Ողջի սրտում վիշտ կար, խոր ցաւ, ողջը ունէր գանգատներ։  
 «Միայն դու ես, իմ տիրուհիս, աշխարհի մէջ առանց վիշտ,  
 Քո պալատդ է առանց ցաւի, քու հոգիդ է միշտ հանգիստ։  
 Խնայիր ինձ, ուրդ եմ ընկնում, դու ես միակ իմ յոյսը,  
 Շապիկ կտրէ որդուս համար, որ վառ պահես իմ յոյսը։»  
 Լուռ կանգնած էր վեհ թագուհին, խորհրդաւոր հայացքով,  
 Նա չէր խօսում, մտածում էր՝ լարուած գաղտնի խորհրդով,  
 Յետոյ ասաց.՝ Ա՛յ կին, շատ եմ խղճում վերադ տիրապէս,  
 Բայց այս գիշեր կաց պալատում, դու, բաներ կան, կըտշսնես։—

## XI

Մութն իջելէ.. Լուռութիւն է շուրջը շքեղ պալատի,  
 Սօսափում են տերեւները.. Բուրում ծաղկունքն հրաշալի..

Շատրուանը նոյն յաւիտեան անդորրութիւնն երգելով,  
 Գլորում է նուրբ հոսանքներ մարգարտափայլ շիթերով։  
 Փայլփայլնւմ են գոհար-աստղեր...Ո՛, ցանկալի ախորժ կեանք,  
 Կասկածաւոր, մի պղտորիլ միտքդ, մի փնտուիր փորձանք,  
 Բնութիւնը հաստատուն է, նա չի մատնում, չի խափում,  
 Բնութեան մէջ Մեծ Աստուծոյ հոգին անվերջ է շրջում...  
 Բայց մեծ արքան չէ անվրդով, հոգին վառ է կասկածով,  
 Խիստ կասկածով, որ վերջապէս վրէժի փոխուեց սոսկ կերպով,  
 Զարախնդաց կամ յիշաչար, ուրախացէր հոգեպէս,  
 Արքան պատիժ է վճռել իր ամուսնուն՝ ընծայ քեզ...  
 XII

Չքնաղ կին է նստած լալիս ննջարանում փառաւոր,  
 Հասարակ կին չէ լացողը, թագուհի է սգաւոր,  
 Նորա կոծից, հառաջանքից անգամ բոլսերն են սարսում,  
 Անգամ քամին երեմնապէս դադարնում է ու լոռնում..

Ո՞վ կարողէ վշտացնել մեծ թագուհուն աշխարհի, —  
 Կասկածել էր տիկնոջ վերայ հարուստ արքան սոսկալի.  
 Երբ նա մի օր գնացել էր անտառ որսալու համար,  
 Իբրև տիկինն ընդունել է իւր մօտ արաբ-սիրահար.

Եւ խիստ յուզուած նսեմ լուրից սպանեց արքան արաքին,  
 Նորա գիակը զմոսելով ընծայ տուեց տիկինին.

«Գիտեմ, քեզ շատ ցաւ է ու վիշտ, առանց սորան ապրելու,  
 Այդ պատճառով ամեն գիշեր սորա հետ ես քնելու։»

Այդպէս ամեն երեկոյեան—սարսափահար ու տխուր—  
 Գիակի հետ մենակ նստած՝ լաց է լինում նա ամուր,  
 Նորա ձայնից, հառաջանքից անգամ բոլսերն են սարսում,  
 Անգամ քամին գիշերուայ մէջ դադարնում է ու լոռնում...»

## XIII

Լոռութիւն է պալտէզի մէջ... Հոգիները չեն իսկ լուռ...  
Մեծ թագուհին լաց է լինում, —սարսափահար ու տիսուր,  
Այդքան մեծ վիշտ ով կունենալ, Աստուած, արար-աշխարհում,  
«Նաժիշտ կանչիր անբախտ կնոջ՝ տեսնի թողայս տիրութիւն»:

Ներս է մտնում արքայական ննջարանը փառաւոր,  
Անկողնի մէջ արքան չկայ, իսկ թագուհին սգաւոր,  
Չկայ այնտեղ ամուսնական քնքուշ սէրը երկնաձիր,  
Անկողնու մէջ թագուհու հետ մի սև դիակ կալ զազիր..

Սարսափում է անբաղդ կինը.. Իսկ թագուհին վշտացած՝  
Հառաչում է ամօթանքից, թախծում ցաւից բորբոքուած.  
—Ի՞նչ պատահաւ, տէր-թագուհի, հարցնում է անբաղդ կին,  
՚Ի սէր Աստուծոյ, միակ յուսըս դու ես երկրի երեսին:—

Բայց սիրտ չունի նա պատմելու... Երևոյթն է պերճախօս,  
Արքայական պալատի մէջ վիշտը մեծ է, բնորոշ...  
—Անվիշտ չկայ աշխարհի մէջ, իսկ ես անբաղդ չեմ երբէք,  
Եթէ ողջի ցաւն ու վիշտը իմիս հետ համեմատէք:—  
Ասաց կինը, դարձաւ իւր տուն՝ անդորր սրտով ու հանդարտ,  
Ողջ աշխարհին պատմեց այս դէպք, որ չի լինիլ անվիշտ մարդ,  
Ահա ակսօր ժողովուրդը կեանքի դժուար ժամերում,  
Միշտ կրկնում է. «Վիշտն ընկեր է ամէնքի հետ աշխարհում»:

## ՇԻՐԱԿԻ

## ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՍՆ ՔԻՑ

ՀԵՅԻԿԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՑ\*

I

Յաւի՞ մէջ է, խեղճութիւնից աչք չի բանում ամբոխը,  
Նորա լացից սիրտ կըծակէ, և կըխղճալ ոսոխը.  
Ի՞նչ պատահեց, հայ ժողովուրդ, որ լալիս ես, տառապում.  
Աղբերացնւ, իմ երկրացի, շատ նեղ օրով եմ ապրում.—

Հաշց չեկաւ, սովէ հասել ամբողջ առատ իմ երկրիս,  
Սովէ հասել, հնար չկայ, չնչով պահեմ ընտանիս,  
Իսկ հարևան քուրդը չի տալ՝ մի օր ուրախ աչք բանամ,  
Իմ քաշածս նեղութեանը չկա՞յ հաշիւ ու սահման...—

Յաւի՞ մէջ է, խեղճութիւնից լաց է լինում, հառաչում,  
Մեծ աշխարհը, հարուստ մարդիկ, քար են, ձայնը չեն լսում,  
Որին պատմէ սրտի ցաւը, ով կըլինի օգնական,  
Թէպէտ ամբողջ ոչնչանա՛ս, թէպէտ կորչիս լաւիտեան...—

II

Բայց մի մեծ յոյս գեռ չէ հանգել ժողովրդի սրտի մէջ,  
Նա կըպահէ, նա կեանք կուտայ, հոգեծաւալ մի կեանք մեծ,  
Ոյժէ առնում ժողովուրդը, ճամբար ընկնում Ս. Աթոռ,  
Նորա յոյսը, ապաւէնը, Ս. Հայրիկն է հոգեոր:

III

Ի՞նչ է լցուել մեծաքանակ ժողովրդի այդ խումբը  
Հնադարեան սուրբ վանքի մէջ, կազմել այդ մեծ ակումբը,

\*յնան. Այս ոտանաւորը զբուածէ այն բուռն ոգեսորութեան ներքոյ, երբ ամենայն հայոց Հայրապետը առաջին անգամ բարեհամեց Ժամանել Ս. Էջմիածին:

Ուխտ է եկել, աղօթելու. այն, ջերմ է ուխտացել,  
Նա եկել է իստակ սրտով իրան հօրիցը խնդրել:

Լուռ է, խաղաղ—համեստաշուք վեհարանը Հայրիկի,  
Դուան առջև խուռն ամբոխն է, ճամբար չկայ ոչոքի,  
Ամէն-մէկը աշխատում է, կուգէ հօր աջն համբուրել.  
Տեսնել նորա լոյս երեսը, յետոյ այնտեղից մեկնել.—

„Հայրիկ, Հայրիկ, մատաղ ենք քեզ, մատաղ ենք քո ս. անուան,  
Արժանացուր սուրբ աջդ առնենք, էլի գնանք մեր ճամբան,  
Հայրիկ, Հայրիկ, միան դէմքդ տեսնենք՝ յոյսերս զարթնի,  
Ելչենք մեռնիլ, թէպէտ խեղճ ենք, անտէր ենք ու անօթի»:

Կտրատում է մեծ ծերունու գթոտ սիրտը հայրական,  
Ի՞նչպէս ելնի, բնչպէս տեսնի աղիողորմ, անկենդան  
Ոյդ պատկերը ժողովրդի, բնչպէս մնայ անտարբեր,  
«Հայրիկ, Հայրիկ, մեզ ինալիր, մեզ մի թողնիլ դու անտէր»:

Էլ չի կարող Հայրապետը զսպել սրտի իւր յուզմունք,  
Դուրս է գալիս նա պատշգամբը, աչքերն աղի-արտասունք,  
Աստուածալին նորա դէմքը ամբողջ՝ գո՛ւթ է, ամբողջ՝ սէր,  
Վէհ է հայացքն, պատկառանք է նորա շքեղ ալիքներ:

Նա կանգնում է, աջէ տալիս, երբ խօսում է ժողովրդի հետ—  
Էլ չի կարող ծածկել վիշտը... և արտասուքն հետզհետ  
Թափթափում են... Սրտաշարժ է նորա սրտի հեկեկոց...  
Ինչո՞ւ եկաք, տուն, տեղ թողիք, թշուառ ժողովուրդ հալոց»:

Պատուիրում է փող բաժանել .Ո՞րտեղից էք, ե՞րբ ելաք,  
— Խալբերթու եմ... Խնուսու ենք... Աստանիկից մեք եկաք...

Ամէն-մէկին աջը տալով՝ սրտով օրհնում է նոցա,  
Մխիթարում է, գուրգուրում է, իւր խօսքերով անխնայ...

Բայց ամբոխի միջից մի ծեր—գողգոջ ու շատ ալեոր—  
Առջև գալիս, վար է ընկնում ոտքերի մօտ իւր ս. հօր,  
Համբուրում է, գուրգուրում է, փաթաթւումէ ոտներին.  
Չափ ու սահման չկայ նորա արտասուքին ու լացին...

Բարձրացնել է տալիս, ասում գթոտ Հայրիկը նորան.  
«Ո՞վ ես, այ մարդ, հերիք ողբաս, մեղք ես վշտումես այդքան,  
Ո՞րտեղից ես, բնչու ալդպէս սիրտ յուզուած է, տխուր,  
Այդ հասակիդ բնչպէս եկար, բարօ, պատմիր ինձ ամուր»:

Հայրիկ, մատաղ լինիմ քեզի, դու ուր թողիր Ս. Խաչ վանք,  
Դու ուր թողիր մեզի անհայր, մեզի անտէր ու անկեանք,  
Հայրենիքէզ, ես Վանէն եմ եկել, խապար եմ բերել—  
Քեզի պատմեմ, սիրտս իշնի, քեզի պատմեմ մեր ցաւեր...

Իսկ Հայրիկը՝ երբ որ լսեց անունը հայրենիքի,  
Սասափկ յուզուած չկարեցաւ լսել պատմածը ծերի,  
Մեկնեցաւ իւր վեհարանը տխուր սրտով վշտացած,  
«Այստեղ կըլինիս, քեզ կըտեսնեմ ծեր վանեցուն նա ասաց...»

1894 թ.

## ԱՍՏՈՒՐԱՄԱՄՈՐ ՏՕՆԸ

### I

Զանգն է զօղանջում—այնպէս տարաժամ,  
Եւ. խօսիստալի, վառ հնչիւններով,

Նորա ալիքներ հանում են վեհ ձախ,—  
Կոչնում են... սրտերը լցնում եռանդով...


Մի ակնթարթում ժողովուրդն արագ  
Վեր ելաւ տեղից... Հասկացաւ արդէն  
Այդ խորհրդաւոր զանգի եղանակ,  
Ժողովրդի ողին զարթնեց համօրէն...  
  
Ամբողջ երկիրը շրջագայելով,  
Զարկուած ամբոխին միխթարելով,  
Փրկելով նորան խիստ աղէտներից—  
Եւ երկնից դրկուած սոսկ ցասումներից,—  
  
Գանձերով, փառքով Աստուածածինը \*)  
Խորանն է դառնում—տունը դարմանիչ,  
Հայ արհեստաւորն որդիքն ու կինը—  
Գնում են բռնեն նորա փէշերից...  
  
Հոգեկան աւելն, երբ ժողովրդեան  
Զարատանջ կեանքը ձգտում է բարձրին...  
Հոգով է ապրում .. Շատերը անցան—  
Բանուոր, գործաւոր և մարդիկ կարգին...  
  
Քեզ են հանդիպում Յիսուսի ծնող,  
Բուռն թախծանքով լցուել է սիրտը  
Քո ժողովրդի,—Դո՞ւ ես ազատող,  
Դո՞ւ ես սփոփող նորա խոր վիշտը...  
  
Մոռացան շատերն գործերն ու համար,  
Փակեցին շուտով խանութի դռներ,

\*) Ծան. Աղէքսանդրասովի նօթնվիրաց“ Ս. Աստուածածնի պատկերը մեծ ժողովրդականութիւն ունի Նիբակում: Աղէտների ժամանակ կամերը երաշտը սաստիանալով սպառնումէ արտերին՝ ժողովրդի ինդրաներով այդ պատկերը քաղաքից տանում են գեւղերը և երկար ժամանակ մնեն են ածում: Կամաց առաջ ցաւերը փարատելու համար գեւղացիք չեն ինայում՝ իբանց առաջ նորա ցաւերը փարատելու համար գեւղացիք չեն կանչերով. վերադարձն գուռակներում ամեն լազմութիւն ամեն դասակարգիք գնում են նորան դիմաւորելու:

Տօն է, կիւրակի՛ ժողովրդի համար,  
Նա ինքը ուզեց այսպէս տօն անել...

## II

Զա՞նգն է զօղանջում.. Ամբոխը խոնում  
Դնում քաղաքից դէպի Ախուրեան,  
Ո՛, ջերմ սրտերի անծայր միութիւն...  
Հայրենի գետակ, ջուր ասպնջական.—



Լսեցէք անթիւ սրտերից բխած  
Ժողովրդական, ջերմ հնչիւնները,  
Եւ խառնէք նորանց ձեր երգին վառուած,  
Երգում է ժողովուրդը, իւր վիշտն ու սէրը...

## III

«Դուսզջ երկիրը գնացիր, ման եկար, Ս. Աստուածամայր,  
Փրկեցիր երկիրը փորձանքից, վշտից զօրքովդ \*) անհամար,  
Ո՛, մենք մատաղ ենք քեզ էլ, զօրքիդ էլ, զօրաւո՞ր Ս. Կոյս,  
Յոզնած, վաստակած, երկիրը շրջած—ժողովրդեան յոյս...»

«Հաւատով կուգամ փէշդ բռնելու, քեզանից խնդրելու,  
Քեզանից խնդրելու, նեղ օրուաս համար՝ որ հաց հասցնես,  
Որ հաց հասցնես, ձեռքերիս ոյժ տաս՝ գործս տեսնելու,  
Գործս տեսնելու, տունս պահելու—չըլինիմ սև երես..»

«Վաղուց է գնացիր ու խաբար չտռանք, կարօտ մնացինք,  
Մենք քանի անգամ խորանդ եկանք ու դատարկ տեսանք,  
Ու դատարկ տեսանք, դատարկ սրտերով՝ տներս գնացինք,  
Տներս գնացինք, լացինք քեզ համար, Ս. Աստուածամայր...»

\*) Ծան. Ժողովուրդը լնդունումէ, որ Ս. Աստուածածինը զօքը ունի, այդ զօքը նորան հետեւումէ, թէ՛ աղէտների և թէ՛ պատերազմների ժամանակ:

«Դու ողջ երկիրը գնացիր ման եկար, ցաւը մեռցրեցիր,  
Փորձանքից, վշտից զօրքովդ անհամար երկիրը փրկեցիր,  
Ո՛, մենք մատաղ ենք քեզ էլ, զօրքեդ էլ, զօրաւոր Ս. Կոյս,  
Յոգնած, վաստակած, երկիրս շըջած, ժողովրդեան լոյս»...

Եւ լուռ մեղմագին ելևէջներով  
Հնչուում էր երգը ժողովրդի սրտից,  
Զանգն է զօղանջում իւր ալիքներով,  
Ոտքի է հանում ամբոխին տանից.—  
Եւ Ախուրեանի մըմունջների հետ  
Զանդէսն ուղղում է իրան քայլերը...

1892. Թ.

### Ե Ր Ա Շ Տ

Ամբոխը խոնած տարակուսանքով երկինք է նալում,  
Այստեղ փրկութեան յոյսը ամբոխի ծնունդ է առնում:

Երակալ դաշտում անձրւ չի գալիս, եւրաք խոռոշ  
Հողն է չորացել, հասկը չի լցում,  
Երակալ դաշտում ամբոխն է լալիս, և սահան ըստ ով  
Ամբոխը ցաւով փորձանք է զգում:

Ահա լոռութեամբ ժողովուել է նա,  
Բաց երկնքի տակ՝ հոգով կաշկանդուած,  
Խորհրդաւոր է շարժմունքը նորա,  
Որպէս սլաքը մըրկից առաջ...

«Դու լեզու չունիս, զգացմունք չունիս,  
Երակալ դաշտի ջանով ժողովուրդ,

Դու քո պապանձուած երկնքիդ նմանիս,  
Ոչինչ չի մնչում շրթունքներդ ցուրտ...»

Բայց չէ, լսում են ձայներ որոտի—  
Կենսական կռուի զօրեղ որոտմունք.  
—Սուրբ Աստուածածին Երակալ դաշտի,  
Դու մեզ բարեխօս, Դու մեզ թե ժիկունք...—

Այսպէս մաղթելով, որպէս բուռն հոսանք—  
Ամբոխը շարժուեց Տիրամօր խորան,  
Քահանաների թևերին դրած՝  
Զօրաւոր պատկերը \*) բերեց երկրին այց:

Այսպէս ջերմ սրտից տեղալ սկսեց,  
Ժողովուրդն այսպէս ջերմեռանդ երգեց.

—Երկիրս չորացաւ, հասկս չի լցում, Տիրանալը ս. կոյս,  
Զրի ենք կարօտ, անձրւի կարօտ, մեռած չէ մեր լոյս,  
Մենք վաստակած ենք, մեր աշխատանքը պտղից դեռ զուրկ է,  
Տիրամալը ս. կոյս, մեր ձայնը լսէ՝ Դու անձրւ զրկէ.—

—Դու անձրւ զրկէ... բերը երկիրս փորձանքից փրկէ,  
Մեր նօթի որդոց հաց հասուր, երկրի դարդը քչացներ,  
Խեղճացած սրտիս ձայնը Քեզ հասնի, -լացը Քեզ հասնի,  
Տիրամալը ս. կոյս, մեր ձայնը լսէ, Դու անձրւ զրկէ...—

(\* Ման. „Եօթըվեաց կամ Աստուածանայ պատկերը ու գանուում է Աղեք-  
սանդրապօլի մայր Եկեղեցում (ու Աստուածանայ): Այս պատկերը, ինչպէս  
ասում են, շատ հին է և նկարուած է Դուկաս աւետարանչի ձեռքով: Աղեք-  
սանդրապօլ բերած է Հասան-Ղալայից՝ 1830 թուին: Աստուածանայ պատ-  
կերը մեծ ժողովրդականութիւն ունի Երակում: Փաղովրդի կաքծերով եր-  
կերը երաշտից աղատել կարող է միայն Եօթըվեքը: Այդ պատկերին հաւա-  
տում են ոչ թէ միայն այլադաւանք քըխստնեաները, այլ և իսլամի հետեւող—  
ներըոր և կոչում են Սիյըամ-Անա»:

Պրակէս աղաքանք, որպէս ջերմ բարբառ,  
Երկրում տարածուեց և երկինք հասաւ,  
Որպէս իսկ գալիք ջրոտ անձրևը սկսեց տեղալ.  
Ամբոխի սիրտը իրան երկրի պէս զովութիւն դտաւ:  
1889 թ.

## ԳԻՒՂԱՑՈՒԿ ԿԵԱՆՔԸ

### I

Սիրեցի կեանքդ, գիւղացի եղբայր,  
Եւ հեռու կեանքում իմ պանդխտութեան՝  
Անպատում սիրով երգեցի նորան:

Ես քո գարունդ անչափ սիրեցի,  
Երբ նա բացւում էր մանկական ժպտով,  
Եւ բնութիւնը պճնում աշխուժով...

Երբոր լեռները զարդարւում էին,  
Կեանք էր ներշնչում նոր զարթած երկիր,  
Երբ դու գութանով դաշտ գնում էիր...

Բըռով ցորենը—առո՛յդ հատիկներ,  
Պարզ առաւտեան սփոնւմ ու սփոնւմ,  
Եւ Ստեղծողին դու աղօթք անում...

Վերից արտուտը ճռողում էր քեզ,  
Լեռնալին կրծքից փախ տուած վտակ—  
Սահում խոխոջում էր փըրփըրադէզ.

Արեւ իրան արծաթէ շողեր  
Պայծառ երկնքից սփոնում էր գետին—  
Ցօղազարդ բոյսերը շողշողում էին.

Ամբողջ բնութիւնը կեանք էր խոստանում  
Յանած հատիկիդ, ջանքիդ քաղցրաբեր,  
Եւ քո մանուկը անհոգ երգնւմ էր...

### II.

Սիրեցի ամռան կեանքդ, երբ արգէն  
Ոսկով փայլում էր քո ցորենի արտ  
Եւ անուշ հովից լինում ալեզարդ...

Սլնժամ քո ձեռըդ փայլուն գերանդին՝  
Առաւոտ-կանուխ գործիդ կ'երթալիր՝  
Հազար փառք տալով արտիդ Պահողին...  
Գլորում էիր—վայելուչ, առորդ՝  
Դեղին ոսկու պէս խոտն ու ճոխ հասկեր,  
Գնալով ոյժը քո մէջ վառւում էր.

Ճակատիդ վերայ քրտինքը հեղեղում,  
Լցւում էր ջղերդ կրակով եռանդի,  
Ու կցում էիր խորից մի «մեանի»...\*)  
Իսկ կեսօրներին՝ երբ տաքը կ'ընկնէր,  
Կային քեզ համար շուքոտ ուռիներ...

### III

Ֆշունըդ կուգար մեղմաշունչ հողմով.  
Զէլրան եզները՝ սիրով՝ ճօճալով,

\*) Ծան, „Մեանին“ հայ գիւղացու սովորական և սիրելի երգն է: Շերակում այդպէս են կոչւում այն միակերպ (monotone) երգերը, որոնք երգւում են առեղողաբար և շատ ձգուած: Երգիչը միևնոյն ժամանակ պատմումէ (երգելով) որ և է՝ ընդհանրապէս տիսուր ընաւորութիւն ունեցող՝ մի անցք: Այս երգը համարեա միշտ սկսում է բարձր ձայնանիշներեց և աստիճանները իջնում է գէպի աւելի ցածրերը: „Մեանին“ շատ անդամարձակ (prosa) պատմուածք է՝ երգելով:

Բարձած օրանը կալդ էին գլորում,  
Այնտեղ կամերը շարժուելով սահում...

Քեզ ես շատ անգամ մօտ տեսնում էի,  
Կարմիր շապիկով, մազոտ կուրծքը բաց,  
Ծաղկէ թաշկինակ գլուխը կապած.

Փալտէ փոցիս ձեռդ խուրձ էիր գլորում,

Դու կանչում էիր, դու հրամալում—

Դէզից վար իջնում կամերիդ նայում.

Մըջունի նման՝ մինչև երեկոյ՝

Սշխատում էիր առանց յոգնելու,

Առանց տրտունջի—հոգոց հանելու...

Իսկ երբ երեկոն իջնէր աստղալից՝

Բոլորում էիր ժիր բանուորներիդ,

Դու կանչում էիր ջահէլ հարսներիդ...

Եւ հէնց լեռներից փչեց մեղմ հովը,

Լուսինն էլ ելաւ՝ սփռեց իր շողը,

Թիակը տառը,

Ծեծածդ տուիր հովին ու զովին,—

Թա՛րմ, ոսկի ցորեն ու դեղին դարման,

Այսօր քեզ համար արդէն պատրաստ կան:

1888. Թիւ.

## Ս Ո Վ Բ

### I

Եղթաների ձա՞յն է գալիս, ո՞րտեղից է այդ ձայնը,  
Շուրջն է նայում խեղճ հօտաղը—լսում՝ բացած բերանը,  
Մարդտեսած կար այսպիսի բան դաշտում ալսքան ժամանակ,—  
Ղօղանջնում է, աւելաննում շղթալի ձայնն համարձակ...

### II

Զտեսնուած վիթխարի է կախուած բարձր երկնքից,  
Ո՞վ է կախել շղթաներով զարհուրելուն այդ բարձրից,  
Զգուշացիր, սէրն Աստուծոյ, հօտաղ, դաշտում մենակ ես,  
Բացի ցուպից, գամբոներից էլ օգնական դու չունես...

Սարսափեցաւ. խեղճ հօտաղը... Սար է կանգնել առաջը,  
Զէ, այդ սար չէ՝ շնչաւոր է—ասես գերան է աջը,  
Մարդու նման նա խօսում է՝ «Հօտաղ, շուտո՞վ...շտապիր...  
Նատ քաղցած եմ, ինչպէս լինի, մի բուռ ցորեն դու ճարիր»...

Ոչ թէ մի բուռ, մի հատիկ էլ, բնչպէս ճարէ հօտաղը,  
Երկրի հացը շատ վատ եկաւ—չոր է ամբողջ սանջաղը,  
Ի՞նչպէս պրծնի, բնչ ջուղար տալ զարհուրելի վիթխարուն...  
—Իշխանաւոր, հաւատա ինձ... ինալիր ինձ... չի ճարւում»...

«Ցորեն չկայ, մէկ հատ հաց տուր—ես անչափ եմ անօթի»,...

Գեռքը տարաւ մախաղի մէջ—փշրունք չկայ սև հացի.

—Աստուած վկայ, ասաց հօտաղը, վախենալով, կըծկըուած.

Ահա դու տես, իշխանաւոր, փշրունք չկայ, ոչ թէ հաց...

«Յորեն չունես, հաց չես տալիս—ես քեզ կուտեմ, քաղցա՞ծ եմ»..  
—Վայ... մի անիր.. իշխանաւոր, ես քեզ ոչխար կըմորթեմ.—  
Ահեղ քաջը ոսկորներով լափում է ողջ ոչխարը,  
Յետոյ կրկին վեր են քաշում, որ չիմանալ աշխարհը:

## III

Սալսափեցաւ... Գիւղ է վազում խղճուկ հօտաղը շուտով,  
«Ի՞նչ պատահեց, ճանապարհին հարցըց մի ծեր անվրդով—  
Շունչը կտրած. կապուած լեզուով, հօտաղը խիստ վախեցած,  
Այդ ծերունուն դէպքը պատմեց—մանրամասն և յուղուած...

«Լաւ ես արել, որդիս, նորան քաջալերեց ծերը հին,  
Եթէ ոչխար չմորթէիր—քեզ կըկլանէր վիթխարին,  
Իսկ այդ շատ վատ նշան կըլինէր, այս տարի էլ հաց չէր գալ.  
Եւ մարդիկը անօթացած պիտի ուտէին իրար:

Լաւ որ քաջը քեզ չկերաւ,—մարդիկ իրար չեն ուտել.—  
Լաւ նշան է, լաւ հաց կուգայ—և կըխնդայ խեղճ ելկիր,  
Աստըծնց էր, ազատուել ես... Որդի, գիտես, այդ սովն էր,  
Ի՞նչ լաւ այդպէս շուտ կշտացաւ, ի՞նչ լաւ շուտ է յետ  
դարձել»...

1894. Թ.



## Հ Ո Վ Ի Ւ

## I

Սարի վրայ, արձակ տեղում  
Զահել տղան թեք ընկած՝  
Հով գիշերին սրինգն-հնչուն—  
Քաղցը է փչում—բարձր ու ցած...  
Լաւ է սարը պարզ գիշերին,  
Գառն եռանդով արածում է.  
Կաթոտ խոտը բոյ է գցում,  
Ցողը երկնից իջնում է...

Իսկ հովիւը արձակ տեղում,  
Հով ու զովի գըկի մէջ,  
Սովորական խաղն է փչում—  
Տխնւը, տրտնւմ ելեւէջ...

Եւ վառ աստղերը գիտելով,  
Իր նեղ օրն է մոռանում,  
Նոցա փալմունքը նկատելով,  
Իր սիրելուն է յիշում...

## II

Դաշտավայրում երկրագործը՝  
Դրսում պառկած՝ քնում է,  
Իսկ շարժմունքով՝ շրջակալքում՝  
Բնութիւնը մնչում է...

Երկրագործի քունն է հանգիստ՝  
Վաստակած ու խոնջ մարմնով,  
Իսկ հովիւր սարի կրծքից՝  
Դեռ չէ դադրել երգելով.—

Նա վառ աստղերը դիտելով՝  
Իր նեղ օրն է մոռանում,  
Նոցա փալմունքը նկատելով՝  
Իր սիրելուն է լիշում...  
1890 թ.

## ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

I  
Ա.ՄԱ.Ռ

Են սուր սարն է—սարի վրայ  
Վրաններն են տարածուած,  
Սըի դուրս եկ, ջահէլ տղայ,  
Արդէն գիշերն է բազմած...

Պարզ է, սիրուն... Ցօղէ իջնում,  
Տղան ելաւ ու քալեց,  
Ի՞նչ հիանալի երգ է լսում,  
Զան, աղջիկն է—ալդ երգեց...  
II

«Աղջի, աղջի, հոգուդ մատաղ,  
Իմ խոր վէրքին ճար արա,  
Քո աչերն են—աղբիւր խաղաղ,  
Քո մազերն են—թաւիշեալա...  
»

«Երնէկ շուտով աշունը գար,  
Հունձ ու կալից շուտ պրծնենք,  
Սարից քշենք ոչխարն ու գառ.—  
Մեզ ժամ տանեն, պսակուենք»...

Պարզ է, սիրուն... Ցօղէ իջնում,  
Տղան կանգնաւ ու լոեց,—  
Ի՞նչ հիանալի երգ է լսում,  
Զան, աղջիկն է—ալդ երգեց...  
III.

## ԶՄԵՌ

Անուշ ծաղկունքը թօշնեցին,  
Սարից գառներ վար իջան,  
Ցուրտ է, ձմեռ... Դաշտ ու գետին—  
Կանաչ խոտից մերկացան...

Իսկ գու չկաս, անսէր աղջեկ,  
Ոչխարն իջել է սարից,  
Է՞լ անաստուած, էլ գեղեցիկ,  
Դու ինչ եղար մեր գեղից...

Գիւն է, գիշեր... Տղան գըսում  
Կանգնած՝ երգում է լոիկ,  
Ի՞նչպէս տխուր է նա երգում,  
«Քեզ փախցրին, ախ, աղջիկ»...

1893 թ.

## ՀԱՅԴԻ ՈՒԿԻ.

Կապուտառակ ձին նսառել եմ,  
 Արագին մօսեցել եմ,  
 Աըա՛զ, ինձ մի ճամբայ տո՛ւր,—  
 Մասիսին կարօսցել եմ...  
Ժաշովէր

### I.

Սարերի միջին, ձորերի միջին,  
 Ազատ հայ տղան մեծացաւ, ծաղկաւ,  
 Նորա ջղերը—նորա կոշտ մարմին՝  
 Կաղնի ծառի պէս՝ ելաւ, ամրացաւ:  
  
 «Ինձ նժոյգ տուէք, կանչեց հայ տղան,  
 Սարերի գրկում էլ չեմ մնալու,  
 Կը ճեղքեմ սար, ձոր, — այստեղից կ'երթամ,  
 Սրտումս դարդ կայ... Հոտ կայ արիւնի...».

Ծանօթ.\* (Haids) Այսպէս էին կոչւույառաջ Ռէնդարբայում և լետոց  
 հարաւային Սլաւոնների մէջ այն մարդքե, որոնք ասամկական բռնութիւններից քախչույթ էին սարերը և անտառները, և այնամեղից սկսում էին կամաւոր կերպով կուեւ մղեւնայդուկը հասարակ աւագակներեց չշնա ազնուասիրտ և բարի կտրիճ է. վիթխարի, բարձրահասակ և ոգարդեմանան. եղիթ: նա չի բարի կտրիճ է. վիթխարի, բարձրահասակ և ոգարդեմանան. եղիթ: նա չի բարող տանել մատնիչներուն և դաւաճաններուն, և երբէք նոցա չի խնայում

Նստում է տղան... Մթնաշաղն առել,  
 Լուսնեակն այն կողմից շնչն է տարածել.  
 Երգում է տղան,—ողջ սարեր թնդում,  
 Սրձագանք տալիս,—արձագանքն առնում: ...

Այսպէս է երգում, այսպէս է կանչում.  
 «Աղբէրներ, ձեր դարդն՝ իմ դարդս մէկ է,  
 Ես դադար չունիմ իմ հօրս հողում—  
 Գամ տեսնեմ ուժ կայ ձեռումս երկաթէ»:

Սարերի միջին, ձորերի միջին,  
 Քամին է խաղում, լուսնեակը շողում,  
 Ազատ հայ տղան՝ իւր դարդոտ հոգին՝  
 Այնտեղ է շնչում, այնտեղ տարածում...

### II.

Աղքատ տան առջև՝ սարի թիկունքում,  
 Նորա քոյրերը—սիրուն գեղջկուհիք,  
 Անուշ, մեղմ ձայնով արցունք են թափում—  
 Նոքա լալիս են—խիստ սրտաճմլիկ...

«Աղբէր, այ աղբէր, «զարիպչ\* մի երթար,  
 Դու անուշ աղբէր, դու մեր թանկ աղբէրն...  
 Բայց հայ տղային այդ ձայնը չի դար,  
 Նա իւրն է երգում՝ շարժ տալով ձորեր»:

\*) Ղարիպութիւն:

«Աղբէր, այ աղբէր, քո ձէնիդ սովըանք,  
Մեր սարում մեծցար, մեր մէջը ծաղկար,  
Մեր դարդը շատ է, «Ղարիպ» մի երթար,  
Քո ձէնիդ սովըանք, մեր սարում մեծցար»...  
Զորեր շարժ տալով, իւր երգն երգելով—  
Զէր ուզում լսել իւր քոյրերի ձայն,  
Հայոց լեռներում՝ լուսնեակ գիշերով՝  
Գնում է տղան, գնում օգնութեան...

1889 թ.



## ՇԻՐԱԿԻ ԳԻՇԵՐՆԵՐ

(Հովուերգութեւն—idyll e)

Նուիրում եմ իմ քոյր Վերոնիկայի անմոռաց յիշաստակին.

Լեռան լանջին՝ տուն կայ կանգնած, ծառաստանում հոտաւէտ,  
Նորա շուրջը խաղաղութիւն և դաշտերն են ծաղկաւէտ,  
Ընտանիք է այնտեղ ապրում—Հայր, մայր, եղբայր, քոյրերով,  
Քոյրերից մին, իմ «մանկիկս»՝ ինձ թովում է վառ սրտով...

Երեկոյեան երբոր տան մէջ քուն են մտնում հանգստի,  
Իսկ մեծ քոյրերն զբաղւումեն իրանց կարով սիրելի,  
Իմ «մանկիկս» չարաճճի շատ չի սիրում անել կար,  
Առանձնացած իր եղբօր հետ՝ երգ է երգում ինձ համար...

Զեն հասկանում նորա սիրտը ո՛չ եղբայրը, ո՛չ քոյրեր,  
Իսկ ծնողներն ինչպէս թոլլ տան մանկիկի մէջ վառուած սէր,  
Չարաճճին գործն անում է, փունջ է կապում քրոջ հետ,  
Այդ փունջերից ինձ է տալիս՝ հօրոտ-մօրոտ ծաղկի հետ:

Շատ խելօք է ու խորամանկ, ինքն էլ չէ որ փոքր է դեռ,  
Հրապուրուելով նորա լեզուից, չեմ դադարում գուրգուրել—  
Գիտեմ, որ նա շատ չի քաշուիլ ծնողներից, քոյրերից,  
Եւ ինձ կ'ասէ որ՝ «Ես չունեմ ոչոք՝ բացի քեզանից:»

Լեռան լանջին՝ տուն կալ կանգնած՝ ծառաստանում հոտաւէտ,  
Նորա շուրջը խաղաղութիւն և դաշտերն են ծաղկաւէտ,  
Խոր գիշեր է այնտեղ տիրել... Իմ «մանկիկս» անդադար՝  
Եղբօր սահուն չունգուրի հետ՝ երդ է երգում ինձ համար...

## II

«Մենք մենակ ենք լեռան լանջին, մենք միշտ միմեանց ենք  
տեսնում,  
Ապա, մտածիր, ի՞նչ ձանձրալի կեանք են վարումայս տեղում,  
Ասես այգին մեզ համար չէ ծաղկում, պտղում նորից նոր,  
Ոչ էլ օդի պարզութիւնը, ոչ էլ գետի մեղմ օրօր...  
«Ի սէր Աստծոյ, ի՞նչ միտք ունի, չունգուրդ ածիր, եղ-  
բայր ջան,  
Ինչու մեզ մօտ մարդ չի գալիս, մեղքը քոնն է ալս անդամ.  
Իսկ հայրիկը ու մայրիկը գնացին շուտով քնելու,  
Առանց այն էլ շատ մենակ ենք, առանց խօսել, անլեզու...  
«Գիշերներն էլ երբ ամէնքդ անուշ քնով քնում էք.  
Հաւատակ ինձ, մէկ օր չեղաւ—քնով տարուիմ ես երբէք,  
Շատ անդամ էլ տեղից թռչում, ձայն եմ լսում մեծ դաշտից,  
Չլինք նանի պատմած սուրբը դուրս է եկել ջրի միջից...  
«Նա ասում էր—Արփաշալից մէկը ելել էր ձիով,  
Եւ լողացող մանուկների մէջքին խփել է ձեռքով,  
Չեռքի տեղը մնացել է նոցա մէջքերի վերայ.  
Երևակալիր, ի՞նչպէս սաստիկ ուժի տէր է եղել դա:  
«Սարսափնամ եմ, եղբայր, ուղիղ, չորս կողմը շատ է դատարկ,  
Իսկ խիստ քամին ամէն կողմից գցել է իւր աղաղակ,  
Լսեցիր, ծառի ճիւղը պոկուեց—քամին շնորհքը ցոյց տուեց,  
Իսկ բուն ի՞նչպէս վատ է կանչում, նա մի չար բան գու-  
շակնց...»

Փամու խաղի, ծառ ու ճիւղի խըշխըշոցի հետ ախորժ,  
Չունգուրի ձայնն խրնխտ է, մեղմ, հնչիւններով իւր որոշ,  
Իմ «մանկիկս» առանձնացած՝ իւր եղբօր հետ անդադար,  
Մեղմ չունգուրի հնչիւնի հետ, երդ է երգում ինձ համար...

## III

«Գիտես, եղբայր, ի՞նչ են պատմում, շարունակում է աղջկը,  
Մի վիթխարի\* շղթաներով վար են կախել երկնիցը,  
Հաց է ուզում նա հօտաղից, չի ունեցել հօտաղը,  
—Քեզ կուլ կուտամ, շատ քաղցած եմ, պատասխանում է  
քաջը:—

«Աղաջնամ եմ, ինձ խնալիր.» և ոչխար է նա մորթում,  
Եւ վիթխարին ողջ լափելով, կրկին վեր է բարձրանում,  
Դսկ հօտաղը սարսափահար՝ գալիս պատմում է մի ծերի,  
Սա ասում է՝ «Լաւ նշան չէ... լաւ ես արել, իմ որդի:»

Ի՞նչ սաստիկ է սառը քամին գուրսը խըշխըշում, խըշխըշում,  
Բարդիները օրօրելով, արմատից է շարժեցնում,  
Քունն աշերիդ՝ ծանրանում է, գնա, քնիր, կաթողին.

Երկնքի մէջ հասաւ „կշեռք“, բայց ես փափագ շեմ քնին..»

## IV

Նստած տեղը ննջում է նա—նորա եղբայրը սիրալիր,  
Իսկ մեծ քոյրը զարթնեց, ասաց՝ «Գնա ընկիր ու քնիր...»  
Պլղ չի լսում գեղեցկուհիս, նա լաւ գիտէ իւր գործը.  
Բան է պատմում նա սարսափով իւր արթնացած քրոջը:

«Վախեննամ եմ, չեմ քնանում, քոյրիկ, լսիր պատմածիս,  
Մի մարդ իրան սպանել է՝ մէկ անդամ մենակ մնալիս,  
Ընտանիքը անտէր մնաց, բայց ասում են ինքնասպան՝  
Սև շուն դարձած՝ ամէն գիշեր՝ այցելում է բակն իւր տան.»

Մահոթ: «) Տե՛ս „Սովուշ”.

Ոչոք նորան չի մօտենում — այդ գլխաքարշ շանը սև,  
Թափառում է տան չորս կողմը ու գնում է լուսադէմ...  
Սարսափելի՛ բան է, քոյրի՛կ... Ո՞վ էր պատմեց — լսեցի...  
Իսկ սատանան միշտ հիւսում է բաշերը էկ ձիերի... —  
«Այդ իմացայ անցեալ գիշեր. — ձիու տոփիւն էր լսում,  
Ախուապանն գնաց — խեղճ ձին շաղախուել էր քրտինքում,  
Ասաց «պոչով սատանան» է նստել վերան, չարչարել,  
Եւ ապացոյց իւր վարմունքին բաշի մազերը հիւսել...»  
Լուսոյ աստղը շողշողում է... Քոյրը նորից քուն մտաւ...  
Գեղեցկուհիս կամաց փակեց արտեանունքները թաւ...  
Եւ ոսկեվառ երազի մէջ, ոգեսրուած անդադար,  
Նա՛տ հրապուրիչ, անուշ լեզուով՝ երգ է երգում ինձ համար...»

## V

Խըշխըշում են ուռիները... Սաղարթներից ծաղկաւէտ,  
Անդորրութեամբ տարածւում է բուրմունքը մեղմ, հոտաւէտ,  
Իմ «մանկիկս» ստուերի տակ նստած երկինք է նայում,  
Պարզ աստղերի կայծերը վառ աչերի մէջ են փայլում...  
«Ա՛խ, եղբա՛յր իմ, շատ միակերպ անցնում են իմ օրերս,  
Ի՞նչպէս սիրոս էլ մերթ տխրում է, արտասւում են աչերս,  
Ես չգիտեմ, կարո՞ղ ես դու սրտիս լուզմունքն հասկանալ,  
Ո՞րտեղից է, ինչո՞ւց եղաւ, ի՞նչ կըլինի ինձ համար...»  
Եւ «մանկիկս» արտասւում է.. Դոհարներ են թափթափւում —  
Նորա չքնաղ, սեւ աչերից և իմ սիրոս տխրեցնում,  
Աստղ է ընկնում պարզ երկնքից, վախենում է իմ մանկիկ,  
Չարագուշակ մտքեր նորան սլացնում են կեանքի գիշեր...  
«Դիտես, եղբա՛յր, ի՞նչ էր պատմում այսօր բարի մեր ծառան,  
Երազի մէջ՝ մի մեծ սև շուրջութիւն էր գուշացած»...

Սարսափահար բղաւել է խեղճը ու ձայնը գցել,  
Շունը ոտից ամուր բռնած՝ չի կամեցել բաց թողնել...  
«Նա զարթել է, առաւօտեան պարտիզանին է պատմում, —  
— Ամի, այսօր մի գալիք է իմ չոր գլխին սպասում,  
Եւ ի՞նչ, խեղճին քաշքաշելով տարան դէպի դատաստան,  
Ի՞նչ է՝ նորա դռան առջև գտել են մի գողցած բան»...

## VI

Քո աչերուդ նման չկայ ամբողջ Շիրակի դաշտում,  
Իմ «մանկիկս», գիշերներն են նոցա միջին վառվառում,  
Ես յոգնած եմ... Զեմ քնանում... Մենակ առջեղ եմ չոքել...  
Զեմ ցանկանում պատմութիւններ անել ամբողջ այս գիշեր:  
Խնդութիւնից չի իմանում ի՞նչ է անում «մանկիկս»,  
Շարժեց կարմիր շրթունքները, վառեց հոգիս ու միտքս.  
«Ո՛, ի՞նչ խաղաղ գիշեր հասաւ, Համբարձման օր է վաղը,  
Զերթանք, եղբայր, ջուր գողանանք, խաղանք բաղդի հին  
խաղը...»\*

«Դիտես, ուղիղ կէս գիշերին՝ ի՞նչ հրաշքներ կըլինին,  
Յիսուս Քրիստոս գէպի երկինք կըհամբառնայ այդ ժամին,  
Իսկ ջրերը երկրագնափի հէնց այդ ժամին խորհրդաւոր,  
Ելչեն հոսիլ-լուռ կանգ կ'առնեն-լանկարծ ու շատ կանոնաւոր.  
«Ընդհակառակ, սար ու ձորեր, բոլոս ու ծաղիկ, քար ու հող,  
Լեզու կ'ելնեն՝ այնպէս ճարտար ու կըխօսեն փոխ առ փոխ.  
Ծաղկի մէկը կ'ասէ՝ այս ինչ հիւսնդութիւն եմ բուժում,  
Իսկ միւսը՝ թէ այս ինչ ցաւից առանց ինձ չեն փրկւում.

Ծանօթ.\* Յայտնի է որ շատ վաղ ժամանակց ժողովութել ունեցել է  
«բաղդ փոքհելու» խաղ. օրինակ նոր տարու երկրորդ օրը երար բաներ են  
ընծայում, բայց խական բազդի խաղը համբարձմանն է, երբ գողցած ջրի  
մէջ ամեն մարդ մի բան է գցում. եւ բայց այն՝ գիւլումին մի տեսն ասեն՝  
մի երեղին կըհանեն ու լւոր տերոջը կուտան:

«Այսպէս բոլոր անբանները լեզու ելած—կենդանի,  
Մի հրաշալի համերգ կազմած՝ երգակցում են հիանալի,  
Ամենայն հանք, ամենայն բոլոս յալանում է իւր օգուտը,  
Այդ գիշերն են բժիշկները անում դեղերի գիւտը:

«Հաւատա՛ ինձ, հէնց այդ ժամին՝ ուղիղ կէս-գիշերուայ մէջ,  
Երբ Քրիստոսը համբառնում է, — գիտունները, մարդիկ մեծ,  
Պահ են մտնում ձորերի մէջ, լեռի, քարի ճեղքերում,  
Որ իմանան հանքի, բոլոսի հետաքրքիր ճոխ լեզուն...

«Եղբայր, ե՞նչպէս ցանկալի է լսել գաղտնիքը բնութեան,  
Աղասնամ եմ, իմ սիրելիս, եկ փորձ անենք «գողութեան»,  
Միայն ջուրը գողանալիս պէտք է միմեանց չտեսնել,  
Ալ շատ ծածուկ, գաղտագողի եօթն աղբիւրից վերցնել:

«Իսկ երբ փարչը ջրով լցուած հանեն ջրից ու գնան,  
Սար ու ձորեր, ծառ ու կանաչ, «տարան, տարան» կըգուան,  
Այդ ժամանակ հարկաւոր չէ դառնալ դէպի յետ նայել,  
Սարսափելի՛ բան է, եղբայր, քար կը դառնաս անտարբեր...

«Ինչու համար քունը այդպէս շուտով իջաւ աչերուդ,  
Շատ հեռու չէ կէս-գիշերը և հրաշքը մօտալուտ...»  
Եւ «մանկիկ» մեղմիկ նիլհեց. .Եւ երազում անդադար  
Հալրենիքիս հնչիւններից՝ երգ է հիւսում ինձ համար...

## VII

Հրաշալի՛ երեկոյ է... Խաղաղութիւն և հանգիստ,  
Հոգիները չեն խաղաղում, հոգիները չեն անվիշտ.  
Կարկաչահոս, կայտառ առուն խօսակցում է ու պատմում,  
Քրոջ համար իւր եղբայրը վառ չունգուրն է հնչեցնում:

Վշտով լի՛ է, խոր թախիծով—արևելեան գործիքը,  
Սնկշուելի տխրութիւնով կուրծքը լցնումէ լիքը,  
Խանդով լցուած պատանեակը՝ զբոսանքի աշխարհում,  
Ոգեսրուած հրապուրում է, -բայց «մանկիկս» չի խնդում.—

Դու ի՞նչ կուզես, որ քեզ բերեմ, դու ի՞նչ կուզես, սիրելիս,  
Միայն որ դու չտանջուիս, միայն որ դու հանդարտուիս,  
Աշխարհալին վայելքներից ի՞նչ որ կուզես—քեզ կուտամ,  
Բայց հոգեկան հանգստութիւնինքս չունիմ, ի՞նչպէս տամ...

Շարժեցնում է մառճանագոյն շրթունքները գեղեցիկ,  
Եւ պատմում է խիստ զգացուած—սիրուն, չքնաղ իմ «մանկիկ».  
«Եղբայր, գիտե՞ս, անցեալ գիշեր ջուր գողանալսւ ժամանակ,  
Երբ մօտեցայ սև կամուրջին-ինձի տիրեց մի սարսափ...»—

«Ասումեն՝ թէ կամուրջի տակ՝ ջրի պառաւ է կենում,  
Եւ միշտ մթնով անցկենողին—ջրի տակն է գլորում,  
Դորա համար իմ հանգուցեալ մամմ՝ երբէք գիշերով՝  
Սնց չէր կենում ջրի կամուրջ, այլ գնում էր ցերեկով:

«Նա ասում էր՝ շատ-շատերը զոհ են գնում պառափն.  
Գրողը-տարած, չար պառաւը շատ է խեղդում փոքրերին,  
Բայց ես չանցալ այդ կամուրջով... այլ եղերքից ջուրն առայ,  
Եւ հազիւ-հազ՝ մեծ սարսափով՝ ահ ու գողով տուն ընկայ...»

«Ի՞նչպէս լաւ է, մեր գողացած ջուրը հիմայ պահել ենք,  
«Եղիական-չորեքշաբթին»՝ մեր բաղերը կը փորձենք,  
Իսկ մինչև այդ օրուայ գալը՝ իրեկուններն ամեն օր,  
Ծաղիկներով. տերեւներով շրջապատում են ջրի բոլոր.

Հարս ու աղջիկ հաւաքւում են, գովաբանում են և երգում,  
Որ ջրի մէջ եղածները սրտին բերեն խնդութիւն...

«Իսկ վիճակի օրը՝ սիրուն, մատաղահաս մի աղջիկ,  
Իւր քոյրերի միջից ինքն էլ պիտի լինի անդրանիկ,  
Գլխի վերայ քողը գցած—ջրի առջևն է նստում,—  
«Զանգիւլում» են մի տուն երգում—աղջիկը մի բան է հանում։

«Արդեօք, եղբայր, բնչ դուրս կուգայ մեզ երկուսիս այդ օրը.  
Նատ եմ ուզում—շուտ իմանամ, շուտ յայտնուի բոլորը,  
Եթէ սրտիս խաղաղութիւն կուտայ խաղը այդ բաղդի,  
Թո՛լ, եղբայր ջան, այդպիսի «խաղ» ամենայն օր խաղացուի։

«Նատ եմ՝ սիրում երգ ու պարեր, շատ եմ սիրում խնդութիւն,  
Բայց սրտիս մէջ անպակաս է խորին թախիծ—տիրութիւն.  
Անուշ գիշեր, ինչպէս զով ես, աղջկայ պէս քնքոյշ ես,  
Կախարդուհու նման գգում—յետոյ քաշում տանջում ես.»

Արտօսրալէր իւր աշերը կապոյտ երկինքն է ուզզում,  
Եւ այդ գիշեր-աչերի մէջ աստղիկներ են փայլփայլում,  
Մեղմ նիրհում է իմ «մանկիկս», և երազում անդադար՝  
Նատ հրապուրիչ, անուշ լեզուով երգ է երգում ինձ համար...»

## VIII

«Անուշ եղբայր, եկ, սփոփիր այս գիշերուայ իմ թախիծ,  
Առ չունգուրդ, գուցէ շուտով գնայ վիշտը ինձանից,  
Իսկ ես վաղը երեկոյեան Աստուածածին կը գնամ,  
Սուրբ պատկերի առաջ ընկած՝ վառուած սրտից կուլամ.»

«Նորա հրաշքը շատ զօրեղ է—Եօթլվիրաց Ս. Կոյսի,  
Վաղը նորա ուխտն է, եղբայր, տեղ չի լինիլ ոչոքի,  
Ամէն կողմից գիւղականը, ժողովուրդը երկրագործ,  
Կուգան նորան ուխտ անելու և կըզոհեն գառնուկ որձ...»

«Զարմանալի՛ հրաշք ունի մեր Ս. Աստուածածինը,  
Ես լիշտում եմ, դեռ փոքր էի, տարիս հազիւ կըլինէր իննը»

Պատմում էին՝ երբ ուստաները պաշարել էին Կարսը,  
Թուրք զօրքերի աչքերին միշտ երևումէր Ս. Հարսը\*):

«Մենք չենք կարող ոչինչ տեսնել, մեր ձեռներն են թուլանում,»  
Ասում էին \*\*): թուրք զօրքերը և հրացանները վար ձգում,  
Մէլրամ—Անան անթիւ զօրքով երևում է մեր աչքին,  
Պաշտպանում է մեր թշնամուն՝ խաչը բռնած իւր ձեռին։

Եւ ուստաները ջարդում էին.. Տիրամայրն հինց չերևէր.՝  
Թուրքերը նորից ոյժ կ'առնէին, կըկըռուէին անվեհեր,  
Բայց իհարկէ՝ „Մէլրամ Անան“ չթողեց իւր ժողովուրդ.՝  
Երեցաւ վերջին անգամ և թուրքն եղաւ «ջարդ ուփուրդ»։

«Ի՞նչպէս զթոտ մայր է մեր Ս. Աստուածածինը Եօթլվիրաց,  
Ոչ մի ուխտող իւր կեանքի մէջ նրանից մերժում չէ ստացած,  
Իսկ լսած ես, անգին եղբայր, անասուններն էլ անգամ՝  
Նորա սիրոյն՝ իրանց ոտով՝ զոհ են գալիս շատ անգամ.»

«Նատ հեռու չէ այդ մեղանից—ճոխ լեռների թիկունքում,  
Աստուածամօր անունովը մի հին վանք կայ անտառում\*\*\*),  
Ամէն տարի այդ անտառից Աստուածամօր սուրբ տօնին՝  
Դուրս է գալիս մի եղերու, պառկում վանքի դռան շէմին։

«Հաւատասէր ուխտաւորներն՝ առաւօտեան շատ կանուխ՝  
Միշտ տեսնումեն սիրուն զոհից—պառկած, խոնարհ, աներկիւղ,  
Այդ ինքնակամ զոհին յետոյ պաշտօնեաները վանական՝  
Մատաղ արած՝ բաժանումեն ժողովրդին գիւղական...»

«Արդէն գիշերն անցաւ, եղբայր,.. «Լուսոյ աստղն» է երևում...  
Խեղճ եղջերու, երեխ հիմայ դէպի սուրբ վանքն է գնում,

---

Ծանօթ. \*) Ս. Մարքարտ Աստուածամայր (Մէլրամ Անան).  
Ծանօթ. \*\*) Վ. Երջին ռաւս-թուրքական պատերազմ՝ 1876-78 թ.  
Ծանօթ. \*\*\*) Ղարաբելիս (Փամբակ)-Աղքասահողապոլից վաթուն վերստ  
հեռաւորութեան վերայ է գտնւում։

Նատ փառաւոր ուխտ է վաղը այդ վանքի մէջ՝ անտառում՝  
Երանի թէ մենք էլ այնտեղ լինէինք այս իրեկուն...»  
Ի՞նչ թովզում է անուշ գիշեր, ի՞նչ զգայուն է չունգուր,  
Մեղմիկ շըրշոց տերեների, հովի սօսիւն—մեղմ ու լուռ,  
Եւ ալիքներն Արփաչալի—քաղցրամբունջ, գալարուն,  
Ո՛,խօսքիդ հետ ինձ չեն թողնում հանգստութեան մտնել քուն։  
Հետզհետէ յոգնածութիւն իւր թևերը տարածեց,  
Եւ «մանկիկս աստեղափայլ աչիկները իւր փակեց,  
Եւ ոսկեփառ երազի մէջ՝ ոգեորուած անդադար՝  
Հալրենիքիս հնչիւններից երգ է հիւսում ինձ համար...»

1894 թ.

**Վ Ե Ր Զ .****Յ Ա Ն Կ****ԹԻՐԱԿԻ ԼԵԳԵՆԴԱՐԻՑ**

Երես.

Նուէր	5
Հասարակաց խումբը և աշուղը	7
Արփաչալի ալիքները	15
Կոյր աշուղը	17
Լուռ ամրոցը	20
Փարուանայ լիճը	21
Կոյս Մարինը	22
Գեալն-Գալա	24
Խելագար հարսը	26
Անկոչ աբեղան	29
* Ս. Մեսրոպ Մաշտոց	32
Վանայ բերդը	34
* Ստեղծողի քղանցը	37
* Աշտի աշխարհը	38

**ԹԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԲՆՔԻՑ**

* Հալրիկը գաղթականների հետ	51
Աստուածամօր տօնը	53
Երաշտ	56
Գիւղացու կեանքը	58
Սովը	61
Հովիւ	63
Երկու պատկեր (Ամառ, Զմեռ)	64
Հայդուկ	66
* Նիրակի գիշերներ	69

## ԾԱՆՈԹ ՈՒԹԻՒՆ

Ա.) Ցանկի մէջ աստղանիշներով նշանակուած ոտանաւորները առաջին անգամ են լոյս տեսնում, իսկ մնացածները տպուած են եղել զանազան ժամանակ մեր պարբերական հրատարակութիւններում (տես, «Աղբիւր» «Տարազ» «Արաքս» «Հանդէս Գրական. և Պատմական...»):

Բ.) Գրքիս ՅՅ Երեսում՝ սկզբից պէտք է կարդալ հետևեալ երկու տողերը, որ շարելու ժամանակ բաց է թողած՝

Ի՞նչ է անում առանձնացած այս ամայի դաշտի մէջ,  
Նա ինչու է փախել կեանքից, ինչու տեղից հրաժարուեց...

(տես Ս. Մ. ՄԱՇՏՈՅ).

Հայաստան  
1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0246728

